

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵԶ

(ՊՈԱԿ)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021-2022 ՈՒՍՏԱՐԻ

Ք. ԱՐԱՐԱՏ 2022Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3-10
Հավատարմագրում	11
Կրթական ծրագրեր	12
Ակադեմիկական կազմ	13
Ուսանողներ	14-19
Շրջանավարտներ	20-21
Կազմակերպչական աշխատանքներ	22-23
Ընդունելություն	24-26
Ենթակառուցվածքներ	27-99
SWOT	

ՆԱԽԱԲԱՆ

Արարատի պետական քոլեջը 2021-2022 ուստարվա գործունեության հաշվետու ժամանակաշրջանի ավարտին փորձում է հանրագումարի բերել անցնող տարվա ձեռքբերումներն ու թերացումները: Այդ գործընթացում ևս մեկ անգամ տեսանելի դարձնելով մեր հաջողությունները՝ մենք ավելի ինքնավստահ ենք կազմում ապագայի ծրագրերը, ավելի թիրախավորված ենք դարձնում հետագա աշխատանքները:

2021-2022 ուստարին նախանշված ծրագրերի իրագործման տարի էր: Քոլեջի համալրման ու թողարկման պատկերը կրկին հավաստեց, որ ԱՊՔ-ն շարունակում է բարձր պահել իր վարկանիշը. միջին և նախնական մասնագիտական / արհեստագործական/ կրթություն ընտրող դիմորդների համար տարածաշրջանում թիվ 1-ին, իսկ մեր շրջանավարտները աշխատաշուկայում պահում են կայուն ու մրցունակ դիրք:

2021 թվականին ԱՊՔ-ն առաջին անգամ ստացավ 4 տարով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ պետության կողմից ԱՊՔ-ի մասնագիտական կրթության որակի ճանաչելիության ապացույց: Միջազգայնացման հարթակում քոլեջը նոր ու բարձր նշաձողի է ձգտում: Մեր գործունեության արդյունավետ ուղղությունների շարքը շարունակելի է՝ գործատուների հետ համագործակցության սերտացում, հեղինակավոր ընկերությունների, նաև պետական կառույցների հետ հուշագրերի ստորագրում, կրթական ծրագրերի արդիականացում, վերապատրաստման դասընթացների ներդրում, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների աշխուժացում և այլն:

Անցնող ուստարում մեզ հաջողվեց իրագործել ԱՊՔ 2021-2022 զարգացման ռազմավարությամբ նախանշված գործողությունների ծրագիրը:

Այս ամենի հանգամանալից մանրամասները, փաստական վավերացումները, ինչպես նաև ԱՊՔ ուսումնական և ֆինանսատնտեսական գործունության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը սիրով ներկայացնում ենք:

Վստահ եմ՝ մեր քոլեջի արհեստավարժ մասնագետների, բանիմաց դասախոսների ու հրաշալի ուսանողների հետ մենք շարունակելու ենք ավելի ու ավելի ամրացնել նախնական մասնագիտական / արհեստագործական / և միջին մասնագիտական կրթության և մեր երկրի բարենորոգ ապագայի կերտման հիմքերը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1.

Որակյալ կրթություն

Ըստ ԱՊՔ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Որակյալ կրթություն» ռազմավարական նպատակի՝ 2021-2022 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Վերանայել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի նորմատիվ փաստաթղթերը:
- Վերամշակել աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ ծրագրեր՝ շրջանավարտների մրցունակությունը բարձրացնելու նպատակով:
- Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ:
- Ստեղծել դասավանդումը և ուսումնառությունը խթանող նորագույն մեխանիզմներ:
- Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներքուլեջային մեխանիզմներ, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:
- Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության ժամանակակից փորձը՝ կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:
- Ներդնել և շահագործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար:
- Վերապատրաստել մանկավարժական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման ուղղությամբ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2.

Հանրանային ներգրավում և ծառայություններ

Ըստ ԱՊՔ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Հանրանային ներգրավում և ծառայություններ» ռազմավարական նպատակի՝ 2021-2022 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Մշակել մարքեթինգային գործողությունների հայեցակարգ և բազմազանեցնել գովազդային նյութերը:
- Հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապի ամրապնդման և մշտադիտարկման համակարգը զարգացնելու նպատակով 2022 թվականի ապրիլ ամսին կազմակերպվեց «Կրթություն և կարիերա EXPO 2022» ներքուլեջային միջոցառումը: Քոլեջ այցելեցին տարածաշրջանի դպրոցների աշակերտներ, գործատուներ, Միասնական սոցիալական ծառայության, Արարատ խոշորացված համայնքի աշխատակազմը:
- Ընդլայնվել է ԱՊՔ-ի ներգրավումը հանրային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները: Ավելին՝ ընդգրկված ենք ԱՊՀ երկրների միջին և նախնական /արհեստագործական/ կրթական միասնական մոդելի կազմման գործընթացը համակարգող միջազգային հասարակական կազմակերպության կազմում: Համագործակցում ենք Մոլդովեչնոյի պոլիտեխնիկական քոլեջի հետ, ըստ համատեղ կազմված տարեկան ծրագրի:
- Պարբերաբար ուսումնասիրվում է տարածաշրջանային պահանջարկը:
- Մշակվել են հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր:
- Բարելավվել է լրացուցիչ կրթության ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3

Որակյալ մարդկային ռեսուրսներ

Ըստ ԱՊՔ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «Որակյալ մարդկային ռեսուրսներ» ռազմավարական նպատակի՝ 2021-2022 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը:
- Լրամշակել դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմեր:
- Ստեղծվել է մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր:
- Բարձրացվել է աշխատողների հիմնական աշխատավարձը՝ հաշվի առնելով ՀՀ գնաճի տեմպերը՝ ըստ պաշտոնական վիճակագրության:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 4

Որակյալ ենթակառուցվածքներ

Ըստ ԱՊՔ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «**Որակյալ ենթակառուցվածքներ**» ռազմավարական նպատակի՝ 2021-2022 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Մշտապես արդիականացման և վերազինման աշխատանքներ են կատարվում քոլեջի ուսումնական մասնաշենքի և բակի տարածքում:
- Մշակել տեղեկատվական համակարգի զարգացման հայեցակարգ:
- «Արդիականացնել քոլեջային տեղեկատվական համակարգը:
- Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5.

Որակյալ ծառայություններ

Ըստ ԱՊՔ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «**Որակյալ ծառայություններ**» ռազմավարական նպատակի՝ 2021-2022 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Ուսումնասիրվում են ուսանողների կրթական և այլ կարիքները,
- Մշտապես բարելավվում են ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի, խորհրդատվության և ուսանողական դասընթացների համակարգը:
- Բազմաբնույթ կրթական միջոցառումներին մասնակցելով քոլեջը նպաստում է ուսանողների ձեռներեցության հմտությունների զարգացմանն ուղղված ծառայությունների կայացմանը, շրջանավարտների հետ Քոլեջի շարունակական կապը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 6.

Ընդունելության բազմազանեցում և համապատասխանեցում

Ըստ ԱՊՔ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի

«Ընդունելության բազմազանեցում և համապատասխանեցում» ռազմավարական նպատակի՝ 2021-2022 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգ:
- Ընդլայնել Քոլեջում ԵՊՀ-ի կողմից դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով ամենամյա օլիմպիադաների անցկացումը:
- Դպրոցների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և

ճանաչողական այցեր Քոլեջ:

- Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները տարածաշրջանում: Ապահովել անհրաժեշտ տեղեկատվական նյութերով:
- Ընդլայնել բուհերի հետ համագործակցության շրջանակները:
- Քոլեջի դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում իրազեկման դասախոսություններ կազմակերպելու համար:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 7.

Ֆինանսական կայունության արդյունավետ կառավարում

Ըստ ԱՊՔ զարգացման ռազմավարության և գործողությունների ծրագրի «**Ֆինանսական կայունության արդյունավետ կառավարում**» ռազմավարական նպատակի՝ 2021-2022 ուստարվա համար նախատեսվել էին հետևյալ գործողությունները.

- Նպաստել Քոլեջի ֆինանսավորման ծավալների մեծացմանը՝ կրթական տարբեր ծրագրերին մասնակցելու միջոցով,
- Յուրաքանչյուր տարի վերանայել ուսման վարձավճարները՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների՝ պայմանավորված շուկայական գործոններով,
- Կանոնակարգել Քոլեջի վճարովի ծառայությունները,
- Մշակել և իրականացնել ռեսուրսախնայողության գործառույթներ:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ

Պետական հավատարմագրում ունենալը միջին մասնագիտական ուսումնական հաստատության կայուն գործունեության և զարգացման երաշխիքներից մեկն է: ԱՊՔ-ն 2020 թվականի հուլիսի 9-ին դիմում-հայտ էր ներկայացրել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»՝ հավատարմագրման կարգի համաձայն: Արդյունքում, ՈԱԱԿ հավատարմագրման հանձնաժողովի՝ 2021 թվականի հուլիսի 24-ի № 57 որոշմամբ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2021-2022 ուստարում ԱՊՔ-ում միջին մասնագիտական կրթական ծրագրով հիմնական և միջնակարգ կրթության հիմքով/ իրականացվել է ուսուցում հետևյալ մասնագիտությունների գծով.

1. 0413.02.5 -«Սպասարկման կազմակերպում»,
2. 0412.01.5 - «Ֆինանսներ»,
3. 0411.01.5 -«Հաշվապահական հաշվառում»,
4. 0414.01.5- «Շուկայաբանություն»,
5. 0613.02.5-«Համակարգչային գեղարվեստական նախագծում»,
6. 0613.01.5 - «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»,
7. 0112.01.5 - «Նախադպրոցական կրթություն»,
8. 1012.02.5 - «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»,
9. 0916.01.5 - «Դեղագործություն»:

Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրով .

1. 1013.03.4- «Խոհարարական գործ» /հիմնական կրթության հիմքով/,
2. 0721.03.4-«Գինեգործություն և հյուրերի արտադրություն» /հիմնական կրթության հիմքով/,
3. 0723.03.4-«Կարի արտադրության տեխնոլոգիա» / միջնակարգ կրթության հիմքով/:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄ

2021-2022 ուստարում քոլեջում աշխատել են 42 դասախոս և արտադրական ուսուցման 4 վարպետ: Բոլոր դասախոսները ունեն բարձրագույն կրթություն: Արտադրական ուսուցման վարպետներից երկուսն ունեն բարձրագույն, երեքը՝ միջին մասնագիտական կրթություն: Դասախոսները սահմանված կարգով մասնակցել են մասնագիտական և մեթոդական վերապատրաստումներ: Դասախոսական անձնակազմում ընդգրկված են, ինչպես բազմամյա մանկավարժական փորձ ունեցող դասախոսներ, այնպես էլ երիտասարդ՝ բարձր որակավորում ու խորը գիտելիքներ ունեցող մասնագետներ: Քոլեջի դասախոսական կազմը պարբերաբար մասնակցում են համագործակցության պայմանագիր կնքած բուհերի համապատասխան ամբիոնների դասախոսների հետ կազմակերպվող սեմինարներին, փորձի փոխանակում իրականացնում այլ ուսումնական հաստատությունների մասնագետների հետ՝ հարստացնելով և թարմացնելով ունեցած գիտելիքները:

Քոլեջի դասախոսները կատարելագործում են իրենց մանկավարժական գիտելիքները նաև մանկավարժամեթոդական և դաստիարակչական բնույթի զեկույցներով՝ հանդես գալով քոլեջի մեթոդական խորհրդի, մանկավարժական խորհրդի և ամբիոնների նիստերում, ակտիվ մասնակցություն ցուցաբերում քոլեջի հասարակական կյանքին: Ուսումնական տարվա ընթացքում իրենց կազմակերպված արդյունավետ և շնորհալի աշխատանքով աչքի են ընկել դասախոսներ Ս. Աբրահամյանը, Ռ. Վարդազարյանը, Ն. Հարությունյանը, Ա. Սարգսյանը, Ա. Մկրտչյանը, Ա. Սահակյանը, Մ. Խաչատրյանը, Գ. Վարդանյանը, Մ. Մարգարյանը, Գ. Ստեփանյանը, Ռ. Մովսիսյանը և ուրիշներ:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ընթացիկ տարում ԱՊՔ-ի առանցքային նպատակներից է եղել քոլեջ-աշխատաշուկա կապի ամրապնդումն ու շրջանավարտների հետ ակտիվ համագործակցությունը: Այս առումով, Կարիերայի կենտրոնն իրականացրել է մի շարք միջոցառումներ: Ընդհանուր տեղեկատվություն արդի մասնագիտությունների, աշխատանքի շուկայի, աշխատանքի առաջարկի և պահանջարկի շուկայական հարաբերությունների վերաբերյալ: Իրականացվել է 2020-2021 ուստարվա շրջանավարտների հետ հանդիպում: Տեղեկատվությունների հավաքագրում շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ: Համագործակցություն ՄՄԾ-ների հետ: ԱՊՔ-ի կողմից կազմակերպվել է ներքոլեջային «Կրթություն և կարիերա EXPO 2022» ցուցահանդես, որում իրենց մասնակցությունը ցուցաբերեցին Արարատի և հարակից համայնքների գործատուները, դպրոցների աշակերտները, ՄՄԾ-ը և այլ արտաքին շահառուներ: 2021 թվականին համագործակցության երկկողմ ծրագիր պլանավորվեց Բելառուսի Մոլոդեչնոյի պոլիտեխնիկական քոլեջի հետ: Անցկացվեց հեռավար հանդիպումներ, մրցույթներ և օլիմպիադաներ: Իրականացվել են անհատական խորհրդատվություններ անձնային առանձնահատկությունները և հետաքրքրությունները բացահայտելու ուղղությամբ: Անցկացվել են քննարկումներ, խաղային և դերային պարապունքներ: Ոչ Ֆորմալ դասընթացներ, հաջողակ բիզնեսի և տարաբնույթ աշխատանքների կազմակերպման հմտությունների մասին զրույց - քննարկումներ: Քննարկում կլոր սեղանի շուրջ «Շարունակական հարատև կրթություն և կարիերայի զարգացման հմտություններ», «Կամավորական գործունեություն», «Առաջնորդման և ղեկավարման հմտություններ», «Աշխատանքի նկատմամբ անձի մոտիվացիայի ձևավորում» թեմայով:

Սովորողների շարժը

№	Ուսանողների շարժ	Ուսանողների թիվը	Վարձի չափը			Սեռը		Կուրսերը				
			Առկա ուսուցում	արական	իգակ.	I	II	III				
	ընդհ.	անվճար.	վճար.ովի		99000	110000	120000					
1	Ուսանողների թիվը տարվա սկզբում	559	354	205	84	113	8	277	282	230	213	116
2	Ուսանողների թիվը տարվա վերջում	520	357	1638	70	84	9	214	306	207	195	118

3	Եկել են տարվա ընթացքում	14	7	7		5		2	8	7		4	10
4	Զորակոչվել են	3	1	2		1	1	-	5	-	-	3	
5	Ավարտել են	130	114	16		6	1	9	48	82	13	-	117
6	Փոխադրվել են	390	248	142		55	87	-	223	167	-	193	194
7	Գերազանցության դիպլոմ են ստացել	30	30	-		-	-	-	9	21	1	-	29

2021թ. Սեպտեմբերի 15-ին տեղի ունեցավ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսխորհրդի նիստը, որին մասնակցեցին կուրսի ավագները, կուրսղեկները: Կուրսերից առաջադրվեցին ամենաակտիվ և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներ՝ ուսխորհրդին անդամակցելու համար՝ հաշվի առնելով նրանց կազմակերպչական հմտությունները, թիմում աշխատելու կարողությունները, պատասխանատվության զգացումը և հասարակական ակտիվությունը: Ուսխորհրդի կազմից ստեղծվեցին հետևյալ հանձնաժողովները.

1. մշակույթի և հայրենասիրական դաստիարակության,
2. սպորտի և ազատ ժամանակի կազմակերպում ,
3. ինֆորմացիոն և հասարակայնության հետ կապերի,
4. գիտակրթական ,
5. սոցիալական :

2021թ. Հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ ԱՊՔ-ի ուսխորհրդի 2-րդ նիստը՝ հաստատության ներքին կարգապահական կանոնների կատարման և հաստատությունում սովորողների կարգապահության բարելավման մասին: Որոշվեց անհարգելի բացակայությունները զգալիորեն նվազեցնելու համար տանել մի շարք աշխատանքներ առավել խիստ և նպատակային մեթոդների կիրառմամբ : Միշտ կապի մեջ լինել ռիսկային գոտում գտնվող ուսանողների հետ, որոնք ուսումնական գործընթացի 30% -ը բաց են թողնում անհարգելի պատճառներով, հրավիրել նարնց լսելու ուսխորհրդի նիստերին, զրույցներ տանել նրանց հետ:

Ուսանողական խորհուրդը փորձել է ուսանողներին ներգրավել տարբեր հանձնաժողովներում՝ իրենց առօրյան առավել հետաքրքիր դարձնելու նպատակով:

Ներկայացվել է 2021-2022 ուստարվա միջոցառումների ցանկը, միջոցառման ժամկետները և պատասխանատուներին: Համավարակի սահմանափակումների հետ կապված փոքր ինչ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ծրագրում: Ուսխորհրդի մշակույթի և հայրենասիրական դաստիարակության հանձնաժողովի անդամների մասնակցությամբ սեպտեմբերի 1-ին ունեցանք 2021-2022 ուստարվա բացման արարողություն: Հոկտեմբերի 5-ին ուսուցիչների տոնի կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում, իսկ միջոցառման ավարտին դասախոսները ստացան շնորհավորական բացիկներ՝ ուսխորհրդի անդամների կողմից պատրաստված: Դեկտեմբերի 13-ին կայացավ «Ձմռան շունչ» մրցույթ-ցուցահանդեսը, որի ժամանակ ուսանողները ներկայացրեցին նկարներ /իրենց ձեռքի աշխատանքը/ և ֆոտոներ: Ուսանողները այս մրցույթին մասնակցել են մեծ ոգևորությամբ: Նրանց կողմից ներկայացվել է մոտ 30 աշխատանք: Մրցույթ-ցուցահանդեսի ժամանակ քվեարկեց դասախոսական կազմը և յուրաքանչյուր կուրսից մեկ ուսանող: Դեկտեմբերի 14-ին ամփոփվեցին արդյունքները, որի ժամանակ հաղթողներ ճանաչվեցին՝ ֆոտո մրցույթից «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Էմմա Հովսեփյանը, նկարների մրցույթից՝ «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Կիմա Գասպարյանը: Հաղթողները տնօրինության կողմից ստացան մշակույթի և ճարտարապետության վերաբերյալ հետաքրքիր գրքեր՝ որպես մրցանակ:

Ուսանողական խորհուրդը մշատական կապի մեջ է գրադարանային խորհրդի հետ: Գրադարանի վարիչ Տ.Խանեյանի և ուսխորհրդի սոցիալական հանձնաժողովի անդամների նախաձեռնությամբ իրականացվեց ԱՊՔ-ի գրադարանի գրքերի վերանորոգում, իսկ գիրք նվիրելու օրվա կապակցությամբ գրադարանում ստեղծվեց թումանյանական Վերնատան շունչը և ուսանողների նոր սերնդին առնչակից դարձրեց օրվա կարևոր խորհրդին: Տյառնընդառաջ և Սուրբ Սարգիս տոները նշեցինք մեծ ոգևորությամբ՝ ներկայացնելով մեր ազգային մշակույթն ու սովորույթները , դրանց կարևորությունը :

Ակտիվ աշխատանքներ է ծավալել նաև սպորտի և ազատ ժամանակի կազմակերպման հանձնաժողովը: Առաջին կիսամյակում ունեցել ենք մարզական փառատոն ֆիզիկական ղեկավարությամբ, որին մասնակցել են 200 ուսանողներ՝ 150 տղա և 50 աղջիկ: Անցկացվել են՝ բազկամարտի, կշռաքարի, թենիսի, շախմատի, շաշկիի, ֆուտբոլի, պարանի ձգման և վազքի մրցույթներ: Մրացանակաբաշխությունը անց է կացվել ԱՊՔ-ի հանդիսությունների դահլիճում, ուր հաղթողները պարգևատրվել են պատվոգրերով ու մեդալներով: Իսկ երկրորդ կիսամյակում զինդեկ Հ. Առաքելյանի ղեկավարությամբ իրականացվեց սպորտլանդիա:

Գիտակրթական և ինֆորմացիոն և հասարակայնության հետ կապերի հանձնաժողովները ևս աչքի ընկան իրենց խմբերի կատարած աշխատանքներով: Ունեցանք հանդիպում ԱՊՔ-ի հետ համագործակցող Բելառուսական քոլեջի ներկայացուցիչների հետ: Նրանց ընդունեցինք ԱՊՔ-ում և ներկայացրեցինք մեր քոլեջի առօրյան, մասնագիտությունները: Տարվա ընթացքում նրանց հետ ունեցանք նաև առցանց հանդիպումներ, ուր քննարկվեցին մեր քոլեջներին վերաբերող, մասնավորապես կրթական հարցեր, միմյանց հետ կիսվեցինք փորձով և ունեցած հմտություններով: Համագործակցությունն անցել է հաճելի և օգտակար:

2021 թ Դեկտեմբերի 22-ի ՈւԽ նիստում ներկայացվեցին ԱՊՔ-ի Կառավարման խորհրդում ընդգրկվող նոր ուսանողները՝ «Ֆինանսներ» 1-ին կուրսի ուսանող՝ Իվան Այվազյանը և «Համակարգչային գեղարվեստական նախագծում» 1-ին կուրսի ուսանողուհի Ելենա Տոնոյանը: Նրանք աչքի են ընկնում իրենց խելացիությամբ, ակտիվությամբ և կարող են քոլեջի ուսանողությանը հուզող կարևորագույն հարցերը բարձրացնել Կառավարման խորհրդի նիստերում:

Գարնան առաջին օրը մեր քոլեջում ավանդույթի համաձայն, սկսվեց ուսխորհրդի հրաշալի նախաձեռնությամբ՝ գարնանաբույր ծաղիկների նվիրատվությամբ, որն ուղեկցվեց հատընտիր երգ-երաժշտությամբ՝ ամրապնդելով ուսանող-դասախոս կապը, մեր սերն ու հարգանքը նրանց նկատմամբ:

2022 թվականի ապրիլի 30-ին համապետական շաբաթօրյակին մասնակից եղան Արարատի պետական քոլեջի թե՛ աշխատակիցները, և թե՛ ուսանողները: ԱՊՔ-ին Արարատ խոշորացված համայնքի ղեկավարի կողմից շնորհվեց շնորհակալագիր: Քոլեջի

ուսանողական խորհուրդը միշտ պահպանում և կարևորում է ուսանող-համայնք կապը և փորձում իր հասարակական գործունեությամբ ընդգրկվել համայնքի աշխատանքներում:

Ուսխորհուրդը ԱՊՔ-ում իրականացվող ծրագրերին մասնակցելու հնարավորություն է տալիս այն ակտիվ ուսանողներին, ովքեր մինչև այդ չեն մասնակցել ուսանողական կառույցների կողմից իրականացվող տարբեր ծրագրերին՝ նպաստելով ուսանողների հետաքրքրության մեծացմանը մշակույթի, սպորտի, արվեստի և կրթության ասպարեզներում:

Մեր քոլեջի ուսանողները հետաքրքրված են նաև քոլեջից դուրս կազմակերպվող տարբեր դասընթացներով, մրցույթներով: Այս տարի ևս մենք ունեցել ենք հաղթանակներ՝ «Ռուսական գրքի տուն» կենտրոնի կողմից երիտասարդների շրջանում ընթերցանության խթանմանը և ռուսաց լեզվի և գրականության ուսուցմանը նպաստելու նպատակով կազմակերպված „Думающее поколение“, մրցույթի արդյունքում 14-18 տարիքային խմբում հաղթող է ճանաչվել ԱՊՔ - ի «Շուկայաբանություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Արփինե Աղաջանյանը :

ՌԴ Դատախազության կողմից կազմակերպված՝ «Միասին ընդդեմ կոռուպցիայի» միջազգային մրցույթում ԱՊՔ-ի ուսանողուհի՝ Սեդա Մանուկյանի կողմից պատրաստված հակակոռուպցիոն տեսանյութը անցել է առաջին փուլը և ընդգրկվել է 60 հաղթողների մեջ:

ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ-ի և Բելառուսի «Մոլոդեչնոյի պետական պոլիտեխնիկական քոլեջ» - ի համագործակցության շրջանակներում 2022 թվականի ապրիլի 21-ին տեղի ունեցավ «Земля – наш общий дом» ուսանողական առցանց գիտագործնական համաժողովը: ԱՊՔ-ի ուսանողներ Լևոն Նորիկի Ստեփանյանին, Արտյոմ Ալիկի Այվազյանին և գիտահետազոտական աշխատանքի համակարգող Ալինա Սահակյանին շնորհվեց վկայական: ՀՀ ԿԳՄՄՆ ԱՊՔ-ի և Բելառուսի «Մոլոդեչնոյի պետական պոլիտեխնիկական քոլեջ» - ի համագործակցությունը իրականացվում է կնքված պայմանագրի և ժամանակացույցի համաձայն: Ուսանողների շփումը (դեռևս առցանց) խթան է հանդիսանում փորձի փոխանակման, հետազոտական աշխատանքների ներդրման համար :

2022թ. Գազարինի 7-րդ միջազգային փառատոնի շրջանակներում կազմակերպված «Գազարինի համաստեղություն» ստեղծագործական գեղարվեստական աշխատանքների

մրցույթի արդյունքում վկայականներ են շնորհվել ԱՊՔ-ի ուսանողներ Ելենա Սահակյանին, Էվա Մնացականյանին, Լուսինե Պետրոսյանին, Տիգրան Կարապետյանին:

Արարատի պետական քոլեջի ուսանողները մեծ հետաքրքրություն ունեն ռուսաց լեզվի նկատմամբ, ուստի նրանցից մի քանիսը մասնակցեցին «Конкурс чтецов» մրցույթին:

Ապրիլի 14-ին կայացած «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱ EXPO 2022 միջոցառումը, որը կազմակերպեց» նախնականա մասնագիտական /արհեստագործական/ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանը՝ ուսխորհրդի նախագահի և կուսերի ակտիվների հետ միասին, այն հնարավորություն էր ևս մեկ անգամ ներկայացնելու ԱՊՔ-ի առաքելությունը, նպատակները, կարողությունները: Կարևորելով ՄԿՈՒ համակարգի դերը՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ ներկայացվեցին կրթական բարձրորակ ծրագրեր: Տարածաշրջանի սոցիալական գործընկերության համագործակցության շրջանակները ամրապնդելու նպատակով Արարատի պետական քոլեջ էին այցելել Արարատ համայնքի աշխատակիցները, միասնական սոցիալական ծառայության անձնակազմը, գործատուներ, Արարատի և հարակից համայնքների դպրոցների ուսուցիչներ, աշակերտներ:

Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 77-ամյակին նվիրված միջոցառումը, որը կազմակերպվեց ԱՊՔ-ի փորձառու դասախոսներ Անահիտ Մկրտչյանի, Լիլիթ Կարապետյանի նախաձեռնությամբ ու մեր շնորհալի ուսանողների մասնկացությամբ՝ հեռավար դիտեցին Բելառուսի Մոլոդեչնոյի պոլիտեխնիկական պետական քոլեջի անձնակազմը և ուսանողները:

Ուսխորհրդի հանձնաժողովների կատարած աշխատանքները կարելի է համարել արդյունավետ: Բոլոր միջոցառումներն էլ նպատակային էին՝ ուղղված ուսանողների ինքնադրսևորմանը, նրանց իրավունքների ու պարտականությունների գիտակցմանը, համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը, հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային համամարդկային արժեքների պահպանմանը,

ուսանողների վարքի և վարվելակերպի ձևավորմանը, ուսանող-դասախոս, ուսանող-ծնող, ուսանող-համայնք, քոլեջ-համայնք հարաբերությունների ամրապնդմանը, ինչպես նաև ուսանողների մոտ մարդասիրական աշխարհայացքի ձևավորմանը:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

2021-2022 ուսումնական տարվա պետական ամփոփիչ ստուգումն անցկացվեց ըստ ուսումնական գրաֆիկի և սահմանված ժամանակացույցի: Պետական ամփոփիչ ստուգմանը թույլատրվել են 130 սովորող, որից 117-ը միջին մասնագիտական կրթական համակարգից, 13-ը` նախնական (արհեստագործական) կրթական համակարգից:

Գերազանցության դիպլոմ ստացել են 30 ուսանող, որից 29-ը միջին մասնագիտական կրթական համակարգից, 1-ը նախնական մասնագիտական /արհեստագործական/, սովորական ավարտական փաստաթուղթ` 100 ուսանող, որից 88-ը` միջին մասնագիտական կրթական համակարգից , 12-ը` նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական համակարգից :

Պետական քննություններում գրանցվել է որակական հետևյալ առաջադիմությունը`

0411.01.5 - «Հաշվապահական հաշվառում»

Մասնագիտական մի քանի առարկաներից ու մասնագիտական մոդուլներից

Մեկ ուսանող` Ադվան Անդրանիկի Մանուկյանը չի մասնակցել պետական ավարտական քննությանը և չի շնորհվել մասնագիտական որակավորում:

18 ուսանող - 83%

0413.02.5 - «Մպասարկման կազմակերպում»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից

24 ուսանող - 83%

0412.01.5- «Ֆինանսներ»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից

12 ուսանող -83%

0112.01.5 - «Նախադպրոցական կրթություն»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից

13 ուսանող -100%

0414.01.5 - «Շուկայաբանություն»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից

10 ուսանող-60%

0613.02.5 - «Համակարգչային գեղարվեստական նախագծում»

Մասնագիտական մի քանի առարկաներից և մասնագիտական մոդուլներից

10 ուսանող--90%

1012.02.5 -«Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»

Համալիր քննություն մասնագիտական մի քանի առարկաներից և մոդուլներից

19 ուսանող – 74%

0916. 01.5-«Դեղագործություն»

Մասնագիտական քննություն մասնագիտական մի քանի մոդուլներից

11 ուսանող-100%

0723.03.4 -«Կարի արտադրության տեխնոլոգիա»

Համալիր քննություն մասնագիտական մոդուլներից

13 ուսանող –93%

Մեկ ուսանող՝ Լուսինե Սլավիկի Գևորգյանը չի մասնակցել պետական ավարտական քննությանը և չի շնորհվել մասնագիտական որակավորում:

Միջին մասնագիտական կրթական համակարգից ԲՈՒՀ-երում կրթությունը շարունակելու են 34 շրջանավարտ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2021-2022 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքները սկսվել են հուլիս ամսից և ավարտվել օգոստոսի 31-ին, որին զուգահեռ ընթացել է ընդունելության գործընթացը: Ուսումնական գործընթացը կազմակերպվել է ուսումնական հաստատության ուսումնական պլաններով և ծրագրերով, տարեկան աշխատանքային և վերահսկողության պլաններով, որոնք ուղեցույց են հանդիսացել ամբողջ ուսումնական տարվա համար: Ժամանակահին կատարվել է դասաբաշխում, կազմվել դասախոսների տարեկան ծանրաբեռնվածությունների, բաց դասերի, փոխադարձ դասալսումների, պարտադիր ստուգողական աշխատանքների, առարկայական հանձնաժողովների նիստերի անցկացման գրաֆիկները: Առարկայական հանձնաժողովներում քննարկվել են ուսումնական ծրագրերը, օրացուցային թեմատիկ պլանները և ներկայացվել հաստատման: Քոլեջի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով կազմվել են տնօրինական, մանկավաժական, տարիֆիկացիոն, կուրսղեկական, գրադարանային, թոշակավորման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների, քոլեջի ներքին գնահատման, որակի, գնումների, մեթոդական, ներքոլեջային վերահսկողության հանձնաժողովներ և խորհուրդներ: Նշանակվել են կուրսղեկներ և կաբինետի վարիչներ: Ուսումնական գործընթացի կազմակերպմանը անմիջական և ակտիվ մասնակցություն են ունեցել լեզվամանկավարժական, տնտեսագիտական, հանրակրթական, նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական բաժինները: Բաժններում ընդգրկված դասախոսների վարիչների, մեթոդխորհրդի, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում կատարվել է 682 ժամ դասալսում, բաժններն անցկացրել են 10 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են ուսումնամեթոդական հարցեր, տարբերակված ստուգարքների հարցաշարեր, պետական քննական տոմսեր, թետեր ու այլ հարցեր: Կազմակերպվել է 14 բաց դաս, ուսումնասիրվել է 7 առարկայի դասավանդման դրվածք, դասախոսների տեսական, գիտական և մեթոդական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ամբիոններում ներկայացվել են 25 մեթոդական զեկույցներ՝ հայ գրականության, մանկական գրականության, անգլերենի, ռուսերենի, հայոց լեզվի, գործարարա հարաբերությունների, համակարգչային օպերատորության, հաղորդակցման հմտությունների, ֆիզիկական կուլտուրայի, ֆիզիկայի, խոհարարության, լոգիստիկայի, COVID-19, սահմանադրական

իրավունքի, սեփական կապիտալի, ճանապարհային երթևեկության և այլ թեմաների վերաբերյալ:

Ամբիոնների և ուսումնական մասի ուշադրության կենտրոնում եղել են պարտադիր ստուգողական աշխատանքների կատարումը, ստուգումը և օբյեկտիվ գնահատումը: Ինչպես նաև մոդուլների արդյունքների հանձնման գործընթացի լիարժեք և հետևողական կազմակերպումը:

Քոլեջի որակյան առաջադիմությունը կազմում է 37,6 %:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ (ԼՂԵԼ ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 07 հուլիսի 2021թ. N 1067- Ա/2 հրամանի N 46 հավելվածի համապատասխան)	Ընդունելության տեղերի թիվը (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված)			2021թ. փաստացի ընդունվածների թիվը ըստ մասնագիտությունների			Դիմորդ ների թիվը՝ I հայտով /թափուր տեղերի հայտով	ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվողների թիվը՝ նշելով կարգավիճակը	Մրցույթից դուրս մնացածների թիվը	Անվճար ուսուցմամբ թափուր տեղերի	Պահուստային տեղերի պահանջարկ՝ հավասարմիավորների դեպքում և վերաբաշխում
	Անվճար ուսուցման	Վճարովի ուսուցման	Ընդամենը	Անվճար ուսուցման	Վճարովի ուսուցման	Ընդամենը					
Համակարգչային գեղարվեստական նախագծում	0	10	10	0	1	1	1	0	0	0	0
*Համակարգչային գեղարվեստական նախագծում	11	4	15	11	4	15	18	0	3	0	0
Նախադպրոցական կրթություն	0	15	15	0	8	8	8	0	0	0	0
*Նախադպրոցական կրթություն	15	10	25	15	4	19	19	0	0	0	0
Դեղագործություն	0	20	20	0	0	0	0	0	0	0	0
Հաշվապահական հաշվառում	0	20	20	0	1	1	1	0	0	0	0
* Հաշվապահական հաշվառում	7	13	20	7	13	20	21	0	1	0	0
Ֆինանսներ	0	20	20	0	1	1	1	0	0	0	0
* Ֆինանսներ	7	23	30	7	23	30	31	1/մանկուց հաշմանդ ամ/	1	0	0
Սպասարկման կազմակերպում	0	20	20	0	1	1	1	0	0	0	0
* Սպասարկման կազմակերպում	17	13	30	17	13	30	30	0	0	0	0
Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	0	20	20	0	2	2	2	0	0	0	0
* Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ	8	17	25	8	6	14	14	0	0	0	0
Շուկայաբանություն	0	20	20	0	1	1	1	0	0	0	0
* Շուկայաբանություն	8	17	25	8	17	25	25	0	0	0	0
Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	0	10	10	0	0	0	0	0	0	0	0
*Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում	14	6	20	14	6	20	20	0	0	0	0
Ընդամենը	87	258	345	87	101	188	193	1	4	0	0

*- հիմնական ընդհանուր կրթության											
---------------------------------------	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ /ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ/ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ (նշել ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 07-ը հուլիսի 2021թ. N 1070-Ա/2 հրամանի համապատասխան 34 հավելվածի)	Ընդունելության տեղերի թիվը (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված)			2021թ. փաստացի ընդունվածների թիվը ըստ մասնագիտությունների			Դիմորդների թիվը՝ I հայտով /թափուր տեղերի հայտով	ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվողների թիվը՝ նշելով կարգավիճակը	Մրցույթից դուրս մնացածների թիվը	Անվճար ուսուցմամբ թափուր տեղերի թիվը	Պահուստային տեղերի պահանջարկ՝ հավասար միավորների դեպքում և վերաբաշխում
	Անվճար ուսուցման	Վճարովի ուսուցման	Ընդամենը	Անվճար ուսուցման	Վճարովի ուսուցման	Ընդամենը					
*Խոհարարական գործ	12	8	20	12	8	20	20	1/երկկողման հիմնդ ազուրկ /			
Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում	0	20	20	0	0	0	0				
Կարի արտադրության տեխնոլոգիա	16	4	20	16	1	17	17				
*Գինեգործություն և հյուսիսի արտադրություն	20	0	20	20	0	20	28		8		
Գինեգործություն և հյուսիսի արտադրություն	5	15	20	0	0	0	0			5	
Ընդամենը	53	47	100	48	9	57	65				

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քոլեջի վարչատնտեսական աշխատանքները՝ ուսումնական մասնաշենքի, գույքի, այգու տարածքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, քոլեջի սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, քոլեջի ուսումնական պարապմունքների, լսարանների ժամանակին նախապատրաստման, ջեռուցման անվտանգ գործարկման, հակահրդեհային պաշտպանության, սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման, քոլեջի ուսումնականության բազան հարստացնելու, պահպանելու և ամրապնդելու համար կատարվել են հետևյալ գործառույթները.

ա) ըստ ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական աշխատանքների գործունեության պլանի, զարգացման ռազմավարության գործողությունների 2021-2022 ուստարվա 2021թ. օգոստոսի 30-ին քոլեջի ուսումնական մասնաշենքը, լսարաններով, կաբինետներով և այլն պատրաստ է եղել սկսելու ուսումնական տարվա գործունեությանը,

բ) քոլեջի ուսումնական մասնաշենքում և տարածքում ըստ անհրաժեշտության իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքների փաստաթղթերի կազմման, աշխատանքների կատարման ընթացքում հսկողության աշխատանքներ,

գ) իրականացվել է քոլեջի ուսումնական մասնաշենքի, պահակային ծառայության, սպասարկող անձնակազմի, այգեպանի, ձմռանը կաթսայատան աշխատակիցների աշխատանքային գործառույթների, աշխատանքի անվտանգության, հակահրդեհային պաշտպանության և այլ հանձնաժողովների պարտականությունների և իրավունքների կատարման բաշխում՝ սահմանված կարգով,

դ) ամբողջ ուսումնական տարվա ընթացքում քոլեջում օգտագործվող տեխնիկական սարքավորումների աշխատանքային գործառույթների համար իրականացվել է անխափան և անվտանգ աշխատանքային գործունեություն,

ե) բուժկետի ապահովվումը անհրաժեշտ դեղորայքով և նյութերով,

զ) 2021-2022 ուս տարում ՀՀ կառավարության որոշման համաձայն, Covid - 19 համավարակի ժամանակահատվածում ուսումնական շենքի՝ լսարանների, կաբինետների, միջանցքների, այլ սենյակների, անհրաժեշտ բակային տարածքների

ախտահանումը սահմանված կարգով իրականացնելու համար ձեռք են բերվել
անհրաժեշտ պարագաներ և հեղուկ լուծույթներ,
է) իրականացվել է գույքագրման գործառույթ,
ը) իրականացվել է ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի կազմում,
թ) գնումների պլանի կազմում ներկայացում հաստատման:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ավանդույթի համաձայն նոր ուսումնական տարին սկսվել է նախապատրաստական աշխատանքներով, որն իր մեջ ներառել է կազմակերպադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանավորումը՝ հիմք ընդունելով ներքոհիշյալ խնդիրները: Պլանավորված աշխատանքները և դրանց կատարման արդյունքները առավել քան բավարար են և բազմաբնույթ՝ ձևի, բովանդակության ու արդյունավետության առումով: Դրանք իրենց մեջ ներառում են հետևյալ գործառույթները. դաստիարակչական աշխատանքի որակի բարձրացումը, քոլեջում դաստիարակչական համակարգի զարգացումը, պրոֆեսիոնալ ստեղծագործական և աշխատանքային դաստիարակության կատարելագործումը, դաստիարակչական աշխատանքի կառավարման կատարելագործումը, ուսանողական խմբերում համակարգի պահպանման ու դրան ուղղված աշխատանքների կատարելագործումը, ուսանողական ռիսկերի խմբում տարվող աշխատանքների կատարելագործումը, ուսանողի անհատականության զարգացման խնդիրները՝ հաշվի առնելով նրանց անձնական առանձնահատկությունները, դաստիարակչական աշխատանքներում միջոցների և տեխնոլոգիաների ներդրումը՝ ուսանողի ինքնորոշման, ինքնազարգացման խնդիրներում, ուսանողի անհատականության զարգացման խնդիրները դասապրոցեսում և նրանից դուրս, կրթության բովանդակության կատարելագործումը: Ուսանողի ակտիվ քաղաքացիական, քաղաքական և իրավական մշակույթի ձևավորման և զարգացման ապահովումը, ուսանող-դասախոս-ծնող կապի զարգացումն ու ապահովումը, միջքոլեջային, իրավական մարմինների, մշակույթի, զբաղվածության կենտրոնների հետ կապի ապահովումը ու զարգացումը:

Այս խնդիրների լուծման ճանապարհին կատարվել է անհրաժեշտ ուղղորդված աշխատանք, որը բերել է քոլեջում դաստիարակչական աշխատանքների էական բարելավմանը: Այն իր մեջ ներառել է՝ հայրենասիրական դաստիարակությունը,

քաղաքացիա-իրավական դաստիարակությունը, բարոյա-գեղագիտական դաստիարակությունը, պրոֆեսիոնալ դաստիարակությունը, առողջ կենսակերպի դաստիարակությունը:

Հայրենասիրական դաստիարակության նպատակներն ու խնդիրները իրենց մեջ ներառել են հարցեր, որոնք նպատակասլաց ու նպատակաուղղված կիրարկման պայմաններում, բերել են ուսանողների մոտ երկրի նկատմամբ իրենց ունեցած սահմանադրական պարտավորությունների անվերապահ կատարմանը, բարձրացրել են ուսանողի սոցիալական ակտիվությունը, ուսանողի մոտ զարգացրել են հայրենասիրական ձգտումները, հարգանքի ու սիրո դրսևորումը երկրի նկատմամբ:

Բարոյա-գեղագիտական դաստիարակությունը հետապնդել է բարոյական բարձր արժեքներ կրող ուսանողի ձևավորմանն ու դաստիարակմանը, նրանց բարձրարժեք մշակութային խնդիրներին հաղորդակից դարձնելուն, ուսանողի ինքնադրսևորման ու ստեղծագործական գործունեության, քոլեջի պատմամշակութային ավանդույթների վերհանման և զարգացման խնդիրներին...

Քաղաքացիա-իրավական դաստիարակությունը ուսանողի իրավագիտակցական խնդիրների տիրապետման և այն ամրակայելու խնդիրներն է ներառել՝ քաղաքական ու քաղաքացիական մշակույթի զարգացումը, սոցիալական ակտիվությունը, գիտակցական վերաբերմունքը Հայաստանի օրենքների, սահմանադրության, նորմատիվ ակտերի նկատմամբ...

Առողջ կենսակերպի և մշակույթի դաստիարակումը ապահովել է ուսումնական ամբողջ գործընթացի նախապատրաստումը, ուսումնադաստիարակչական գործընթացի պատշաճ իրականացումը, հոգեբանորեն առողջ, անձնապես զարգացած, կյանքի բարդություններում ճիշտ և արագ կողմնորոշվող անհատի ձևավորումը, բարեկիրթ քաղաքացու կայացումը...

Տարեսկզբին կուրսերում անց են կացվել կուրսային ժողովներ՝ ավագների ընտրության խնդրով, քննարկվել են հաճախումների, անհարգելի բացակայությունների, առաջադիմության, ուսանողների կարգապահության, վարքի նորմերի, բարեվարքության ամրակայման խնդիրները: Տնօրենի հրամանով նշանակվել են 23 կուրսղեկներ քոլեջային համակարգում և 6 վարպետներ նախնական մասնագիտական (արհեստագործական) համակարգում: Ընտրվել է ուսանողական խորհրդի նոր կազմ, որից էլ ուս խորհրդի նախագահ է ընտրվել «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Գոհարիկ Ալթունյանը: Այնուհետ աշխատանքները կազմակերպվել և անցկացվել են ըստ բնագավառի՝ աշխատանքային պլաններով:

Ուսումնական տարին սկսվել է «Գիտելիքի և դպրության օրվան» նվիրված համաքոլեջային հանդիսությամբ: Կազմվել են «Ուսկե աշուն», «Ուսանողական զարուն» փառատոնների 10-ական բազմաբնույթ միջոցառումների ժամանակացույցերը, որոնցով այդ աշխատանքները իրականացվել են ուսումնական ամբողջ տարվա ընթացքում: Տարվա ընթացքում այլևայլ միջոցառումների շարքում առանձնահատուկ տեղ է հատկացվել «Ուսուցչի օրվան», «Մայրենի լեզվի միջազգային օրվան», «ՀՀ բանակի օրվան», «Մեծ եղեռնի օրվան», «Հաղթանակի եռատոների», «Հոգևոր տոների»՝ «Սուրբ Սարգիս» և «Տյառնընդառաջ», Հայաստանի անկախության 30-ամյակին, Անկախ պետությունների համագործակցության 30-ամյակին նվիրված

բազմաբնույթ միջոցառումներ, ցերեկույթներ: Մեր ուսանողները կուրսդեկների ղեկավարությամբ մասնակցել են համաքաղաքային, ներքուլեջային գրեթե բոլոր միջոցառումներին, ցուցահանդեսներին, ճանաչողա-ուսումնական էքսկուրսիաներ են անցկացրել հիմնարկ-ձեռնարկություններում, պատմամշակութային վայրերում:

Անց է կացվել Երևանի պետական համալսարանի, որի մարզային ներկայացուցչությունը Արարատի պետական քոլեջն է, հանրապետական ամենամյա առարկայական օլիմպիադա: Մեր ուսանողական խորհրդի ջանքերով կազմակերպվել և անց է կացվել «Կարիերա և կրթություն EXPO-2022» միջոցառումը: Կազմակերպվել է «Ձմռան շունչ» մրցույթ ցուցահանդեսը, ուր ուսանողների կողմից ներկայացվել է շուրջ 30 աշխատանք, մրցույթի մասնակիցներն ու հաղթողները պարգևատրվել են հետաքրքիր գրքերով: Ակտիվ է գրադարանային և ուսանողական խորհուրդների ակտիվ համագործակցությունը: Կազմակերպվել են գրական-երաժշտական ցերեկույթներ (Թումանյան, Սպենդիարյան), մարզական փառատոն, ռազմամշակութային սպորտլանդիա, բազկամարտի, թենիսի, շախմատի, շաշկիի, ֆուտբոլի, պարանի ձգման, վազքի մրցույթներ: Կազմակերպվել է հանդիպում մեր քոլեջի հետ համագործակցող Բելառուսական քոլեջի ներկայացուցիչների հետ և առցանց հանդիպումներ: Կազմակերպվել է գարնանագալին ծաղիկների նվիրատվություն քոլեջում: Քոլեջի ուսանողները մասնակցում են նաև արտաքոլեջային բազմաբնույթ միջոցառումներին: «Ռուսական գրքի տուն» կենտրոնի կողմից երիտասարդների շրջանում ընթերցանության և Ռ.լեզվի և գրականության ուսուցմանը նպաստելու նպատակով կազմակերպված «Думающее поколение» մրցույթում հաղթող ճանաչվեց մեր Արփինե Աղաջանյանը, ՌԴ դատախազության կողմից կազմակերպված «Միասին ընդդեմ կոռուպցիայի» միջազգային մրցույթում մեր քոլեջի ուսանողուհի Սեդա Մանուկյանի կողմից պատրաստված

տեսանյութը անցել է առաջին փուլը: Ամուր է կապը մեր քուլեջի և Բելառուսի պոլիտեխնիկական քուլեջի միջև: «Земля наш общий дом» ուսանողական առցանց աշխատագործնական կոնֆերանսում մեր ուսանողները արժանացան վկայականի: Գագարինի 7-րդ միջազգային փառատոնի շրջանակներում կազմակերպված «Գագարինի համաստեղություն» ստեղծագործական գեղարվեստական մրցույթի արդյունքում մեր քուլեջի 4 ուսանողների շնորհվեցին վկայականներ:

Հայրենական մեծ պատերազմի 77-ամյակին նվիրված միջոցառումը հեռավար դիտեցին Բելառուսի Մոլոդեչնոյի պոլիտեխնիկական քուլեջի անձնակազմը և ուսանողները:

Տարվա ընթացքում հրավիրվել են կուրսղեկական խորհրդի 6 նիստեր՝ առաջին կիսամյակում՝ 2 նիստ և երկրորդում՝ 4 նիստ, որոնցում քննարկվել են կազմակերպատիարակչական աշխատանքներին առնչվող ավելի քան 22 հարցեր:

Յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի օրերին հրավիրվել և անցկացվել են 37 կուրսղեկական ժամեր, ուր քննարկվել են հայրենասիրական, քաղաքացիա-իրավական, բարոյա-գեղագիտական, պրոֆեսիոնալ, առողջ ապրելակերպի դաստիարակության հարցեր՝ նախապես կազմված թեմատիկ պլանով, որն իր մեջ ներառել է շուրջ 40 թեմաններ: Կազմվել է նաև լրացուցիչ թեմատիկ պլան՝ շուրջ 85 հարցերով:

Անց են կացվել ծնողական 5 ժողովներ, որոնք նպաստել են ապահովելու քուլեջ-ուսանող-ծնող կապի պատշաճ գործընթացի ապահովմանը:

Բոլոր կուրսերում յուրաքանչյուր ամիս մեկ անգամ անց են կացվել կուրսղեկ-դասավանդող դասախոսներ խորհրդակցություններ:

Իրականացվել է ամենօրյա հերթապահություն քուլեջի բոլոր հարկերում՝ դասախոսների ներգրավմամբ՝ պատշաճ կարգուկանոն ապահովելու հեռանկարով:

Մեծ տեղ է հատկացվել կուրսերում ճանաչողա-ուսուցողական, մշակութային էքսկուրսիաներին և այցելություններին, ուսանողներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել համաքաղաքային մշակութային միջոցառումներին, շաբաթօրյակներին, ծառատնկման, բարեկարգման աշխատանքներին:

Մերձողական աշխատանքներ և օգնություն է կազմակերպվել քոլեջում կուրսդեկների դաստիարակչական գործունեությանը :

Լրջագույն վերաբերմունք է ցուցաբերվել վերադաս կազմակերպությունների՝ ՀՀ կառավարության L № 1902-L «Առողջ ապրելակերպի» , ՀՀ ԿԳՄՄ նախարարության հանձնարարականների 01.08.2022թ. № 02/10-1/4468-2022՝ «Անչափահասների շրջանում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի գործածման կանխարգելման, թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարելու մասին, 29.03.2022թ՝ 02/10-1/6745՝ ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև «Սպարտակիադա» մարզային միջոցառման անցկացում,

«Գագարինի համաստեղություն» ստեղծագործական գեղարվեստական աշխատանքների մրցույթ՝ 08-03-2022թ.՝ 02/10.2/4706-2022, հանձնարարականների կատարմանը:

ԼԵԶՎԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2021-2022 ուստարվա I կիսամյակի մեկնարկը հայտարարելուն պես, լեզվամանկավարժական բաժնի վարիչի աշխատանքային պլանի համաձայն, տեղի է ունեցել ուսումնական ծրագրերի քննարկում, դասախոսների և վարպետների օրացուցային թեմատիկ պլանների քննարկում, թերությունների առկայության դեպքում դրանք շտկվել են: Համաձայն ԱՊՔ-ի կանոնակարգի հաստատվել է ուսումնական գծով տնօրենի տեղակալի և լեզվամանկավարժական բաժնի վարիչի կողմից: Այս ամենը նույն հերթականությամբ իրականացվել է II կիսամյակում:

I կիսամյակի մեկնարկին քննարկվել և հաստատվել են առարկայական կաբինետ-ների աշխատանքային պլանները՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալի և լեզվամանկավարժական բաժնի վարիչի կողմից:

I և II կիսամյակներում քննարկվել և հաստատվել են տնօնության կողմից տրվե-լիք պարտադիր ստուգողական աշխատանքների տարբերակները հետևյալ առարկաներից՝ Հանրահաշիվ, Երկրաչափություն, Հայոց լեզու և գրականություն, Ռուսաց լեզու և Անգլերեն: Վերոնշյալ գրավորները իրականացվել են ուսումնական մասի կողմից տրված ժամանակացույցի, որի որակական առաջադիմության տրվ-յալները ներկայացվել է հանրակրթության բաժին, այդ ամենի վերլուծությունը կներկայացնի բաժնի վարիչը:

I և II կիսամյակներում քննարկվել և հաստատվել են բաց դասերի և որոշ առարկաների դրվածքներ: Նախատեսված բոլոր բաց դասերը և առարկայի դրվածքները իրականացվել են համաձայն աշխատանքային պլանի ժամանակացույցի: Բոլոր բաց դասերի պլանները և առարկայական դրվածքների մշակումները առկա են լեզվամանկավարժական բաժնի համապատասխան փաթեթներում:

I և II կիսամյակներում իրականացվել են դասալսումներ և բաժնի վարիչի կողմից, և դասախոսների-վարպետների միջև, բոլոր դասալսումները /240 ժամ արձանագրվել են դասալսման մատյանում: Ուստարվա ընթացքում իրականացվել է 7 բաց դաս և 3 առարկայի դրվածք է ուսումնասիրվել, այս ամենը իրականացվել է ըստ աշխատանքային պլանի նախատեսված ժամանակացույցի:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2021-2022 ուստարում Արարատի պետական քոլեջի տնտեսագիտական բաժնի աշխատանքները կազմակերպվել են բաժնի կողմից մշակված աշխատանքային պլանին համապատասխան:

Բաժնի կողմից կազմակերպվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Առարկայական ծրագրերի ուսումնասիրում:
- Օրացուցային թեմատիկ պլաների կազման աշխատանքների վերահսկում:
- Առարկայական կաբինետների աշխատանքային պլանի կազմում և վերահսկում:
- Փոխադարձ դասալսումների գրաֆիկի կազմում և վերահսկում:
- Պետական և կիսամյակային քննական հարցաշարերի կազմում:
- Մոդուլային աշխատանքների արդյունքների հանձման վերահսկում:
- Կուրսղեկների հետ կուրսերի որակական ցուցանիշների վերահսկում:

2021-2022 ուստարվա ընթացքում տնտեսագիտական բաժնում տեղի են ունեցել նոր ծրագրերի կազմում համապատասխան մասնագիտությունների լիցենզավորման համար: Բաժնում ընդգրկված համապատասխան մասնագետների, ինչպես նաև գործատուների հետ համատեղ քննարկումների արդյունքում կազմվել են «Համակարգչային գեղարվեստական նախագծում» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում » մասնագիտությունների մոդուլային ծրագրերը:

Ամբիոնում կա հետևյալ առարկայական կաբինետները, որոնցում պարբերաբար իրականացվում են ցուցապաստառների թարմացումներ և այլ աշխատանքներ.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2020-2021 ուստարվա արդյունքների համեմատման արդյունքում ՄՄՀՈՒ բաժինը արձանագրել է հետևյալ աշխատանքային առաջընթացները.

Իրականացվել է նախաավարտական պրակտիկաների կազմակերպման աշխատանքների քննարկում:

Մենթորության կիրառությունը առավել արդյունավետ է դարձրել ուսումնական պրոցեսը,ինչպես նաև նպաստել նոր փորձի փոխանակման,նոր մեթոդների ու փորձի ձեռք բերման գործընթացի ճիշտ կազմակերպմանը:

Կիսամյակների արդյունքների համեմատումն ցույց տվեց առաջադիմության և որակի աճ .դրա մասին են վկայում որակական ցուցանիշները:

Ուսանողների մասնագիտական պրակտիկան ուսանողների կրթական ծրագրի մի մասն է և իրականացվում է կոնկրետ մասնագիտական գործունեության ոլորտներում՝ պրակտիկայի հիմնարկի և քոլեջի կողմից նշանակված ղեկավարների հսկողությամբ և անմիջական աջակցությամբ: Ուսումնական պրակտիկան կարևոր է ուսանողների համար, քանի որ նոր հմտություններ, կարողություններ ձեռք բերելու, աշխատանքային գործընթացին տեղում ծանոթանալու հնարավորություն է տալիս: Տեսողական ընկալումների և տեսական գիտելիքների համադրությամբ ուսանողը ստանում է իր ապագա մասնագիտության ամբողջական պատկերը: Ընդհանրապես պրակտիկաներն ուսանողներին տալիս են թիմային աշխատանքի, շփման, հետազոտություն կատարելու հմտություններ:

Արարատի պետական քոլեջում 2021-2022 ուսումնական տարվա պրակտիկայի բաժնի աշխատանքները սկսվել են 2021 թվականի օգոստոսի 30-ից : Պրակտիկայի բաժնի կողմից կազմվել են պրակտիկայի միասնական գրաֆիկը, աշխատանքային պլանը, անցկացվելիք նիստերի գրաֆիկը, նիստերի օրակարգը:

Ուսումնական մասի կողմից կատարված ժամաբաշխման համաձայն՝ ըստ մասնագիտությունների, պրակտիկաների ղեկավարների կողմից նախապես կազմվել են պրակտիկաների օրացույցային թեմատիկ պլանները և հաստատվել ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից:

Ըստ աշխատանքային պլանի, նիստերի օրակարգի և պրակտիկայի բաժնի կանոնակարգի 1-ին կիսամյակում նախատեսված բոլոր ավարտական կուրսերի առանց տեսական ուսուցման ուսումնական պրակտիկաներն անցկացվել են հավուր պատշաճի :

Բոլոր պրակտիկաներն և՛ առաջին, և՛ երկրորդ կիսամյակում կազմակերպվել և անցկացվել են տնօրենի կողմից հաստատված պրակտիկայի անցկացման թույլտվության հրամանների, համապատասխան հիմնարկների հետ պրակտիկայի ժամանակացույցի հիման վրա կնքված պայմանագրերի հիման վրա:

Պրակտիկաներն ավարտվել են տնօրենի կողմից հաստատված արդյունքների ստուգման օր նշանակելու մասին հրամանով :

Ժամանակին անցկացվել են պրակտիկայի պաշտպանությունները, ներկայացվել են պրակտիկայի օրագրերը, լրացվել են պրակտիկայի մատյանները և տեղեկագրերը:

Համաձայն պրակտիկայի նիստերի օրակարգի 2021-2022 ուսումնական տարում նախատեսված է եղել 4 նիստ: Բոլոր նիստերը անցակացվել և արձանագրվել են ժամանակին:

Բոլոր ավարտական կուրսերը պրակտիկաներն անցկացրել են տարբեր կազմակերպություններում և արտադրական ձեռնարկություններում: Դրական և բարձր կարծիք են հայտնել համապատասխան վայրերում իրենց կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարները: Պրակտիկաների ընթացքում, «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողները կարողացել են իրենց լավագույնս դրսևորել պրակտիկայի անցկացման վայրերում, ձեռք բերելով պրակտիկաների վայրերի կողմից նշանակված ղեկավարների և կոլեկտիվի հարգանքն ու վստահությունը :Ուսանողները պարտաճանաչ կերպով հաճախել են պրակտիկաներին, ցույց տվել իրենց տեսական գիտելիքները ,գործնական աշխատանքներ կատարել և փորձել են հնարավորինս շատ հմտություններ ձեռք բերել պրակտիկաների ընթացքում: Որոշ ուսանողներ նաև ստացել են աշխատանքի հրավերներ բանկերից, ապահովագրական ընկերություններից, արտադրական հիմնարկներից և մանկապարտեզներից :

Պրակտիկա անցած կուրսերի որակական առաջադիմությունը՝

1. «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 2-րդ կուրս - 75%
2. «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության 2-րդ կուրս-
3. «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտության 2-րդ կուրս - 100%
4. «Դեղագործություն » մասնագիտության 2-րդ կուրս -100%
5. «Նախադպրոցական կրթություն » մասնագիտության 2-րդ կուրս -100%
6. «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության 2-րդ կուրս - 92.8%
7. «Շուկայաբանություն» մասնագիտության 2-րդ կուրս -70%
8. «Ֆինանսներ» - մասնագիտության 2-րդ կուրս – 95,8%
9. «Ֆինանսներ» մասնագիտության 3-րդ կուրս – 100%
10. «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ» մասնագիտության 3-րդ կուրս – 84,2%
11. «Սպասարկման կազմակերպում» մասնագիտության 3-րդ կուրս – 87,5%
12. «Շուկայաբանություն» մասնագիտության 3-րդ կուրս -70%

13. «Նախադպրոցական կրթություն » մասնագիտության 3-րդ կուրս - 100%
14. «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 3-րդ կուրս -73,5%
15. «Դեղագործություն » մասնագիտության 3-րդ կուրս - 100%
16. «Գինեգործություն մասնագիտության» 1-ին կուրս – 40%
17. «Խոհարարական գործ» մասնագիտության 1-ին կուրս- 43,7%
18. «Կարի արտադրության տեխնոլոգիա » մասնագիտության 1-ին կուրս –100 %
19. «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության 3-րդ կուրս-90%
20. «Խոհարարական գործ» մասնագիտության 2-րդ կուրս- 83%
21. «Գինեգործություն մասնագիտության» 2-րդ կուրս -89%
22. «Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»մասն. 2-րդ կուրս- 100%

Ստորև ներկայացված են կազմակերպություններ, որոնց հետ կնքվել են պայմանագրեր 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում՝

1. «Sil insurance» ապահովագրական ՓԲԸ
2. «Հայ բիզնես բանկ» ՓԲԸ
3. «Վեդի Ալկո» ՓԲԸ
4. « Արարատի գինու գործարան »ՍՊԸ
5. «Տելեկոմ Արմենիա »ՓԲԸ
6. «ԵԿԳ» ՓԲԸ Այգավանի մասնաճյուղ
7. «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
8. Ա/Ձ Երվանդ Թադևոսյան
9. «Գրեգ Ֆարմ »ՍՊԸ
10. «Արարատի կոնյակի գործարան» ՍՊԸ
11. «ԱրմԳար Պրոդ»ՍՊԸ
12. «Վահագնի» հարսանյաց սրահ
13. Արարատի քաղաքային համայնք
14. «Արմինաշոդ» ՍՊԸ
15. «Վան 777» ՍՊԸ
16. Ավշար գյուղի միջնակարգ դպրոց
17. «Արարատ քաղաքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ
18. «Արարատ քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ

19. «Արարատ քաղաքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ
20. «Արարատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ
21. Ա/Ձ Ժիրահայր Խաչատրյան
22. Ա/Ձ Գեղամ Գևորգյան
23. Ա/Ձ Գագիկ Ղազարյան
24. Ա/Ձ Թեհմինե Մանուկյա
25. Ա/Ձ Լուսինե Նալբանդյան
26. Ա/Ձ Ռոբերտ Նուրիջանյան
27. Ա/Ձ Վանիկ Իսրաելյան
28. «Ավշարի գինու գործարան» ՍՊԸ
29. Ա/Ձ Արմեն Սարգսյան
30. Ա/Ձ Նժդեհ Ալեքսանյան
31. Ա/Ձ Արտուշ Բարսեղյան
32. Ա/Ձ Էդգար Ղևոնդյան
33. Ա/Ձ Արման Աբրահամյան
34. Ա/Ձ Արթուր Մուրադյան
35. Ա/Ձ Եղիշե Մուրադյան
36. «Մաքս Պրինտ» տպագրատուն
37. «Ֆրիենդ» ՍՊԸ
38. «Գոռ Պլաստ» ՍՊԸ
39. «Ակբա բանկ »ԲԲԸ
40. «ՅունիԲանկ» ԲԲԸ
41. Ավշարի գյուղական համայնք
42. Եղեգնավանի գյուղական համայնք
43. Վեդիի քաղաքային համայնք
44. Ա/Ձ Քնարիկ Կարապետյան
45. «Ծովք» հացատուն
46. «Անդրանիկ Սիմոնյան» ՍՊԸ
47. «Վեդի Պլաստ» ՍՊԸ
48. «Երասխի գինու գործարան» ՍՊԸ
49. Ա/Ձ Մուրադ Մուրադյան
50. Ա/Ձ Արմեն Այվազյան
51. Ա/Ձ Հովհաննես Գևորգյան

ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանը հասարակական կառույց է, որը ներառում է տեղեկատվական և մշակութային բաղադրիչներ և դրանով նպաստում է ինչպես տեղեկատվության զարգացմանը, այնպես էլ արթնացնում է սեր ընթերցանության և գրքի հանդեպ:

Գրադարանային խորհուրդը իրականացնում է տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն: ԱՊՔ-ի գրադարանը ունի համակարգված հավաքածու և այն տրամադրում է ուսանողներին, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմին՝ ժամանակավոր օգտագործման համար:

Գրադարանի առաջնահերթ խնդիրն է կազմակերպել գրականության վերաբերյալ տեղեկատվություն՝ ընթերցողներին լավագույնս սպասարկելու համար ինչպես նաև նպաստել քոլեջում իրականացվող ուսումնադասատիարակչական աշխատանքներին:

2021-2022 ուստարվա աշխատանքային պլանով գրադարանային խորհուրդը նախատեսել էր.

- գրադարանային խորհրդի նիստերի կազմակերպում և անցկացում,
- ԿԱՀ-մուտքագրել բոլոր առաջին կուրսերի անձնական տվյալները,
- կազմակերպել դպրոցական գրականության սպասարկման աշխատանքներ առաջին կուրսերում,
- գրքերը չբավարարելու դեպքում բերել այլ գրադարաններից,
- կազմակերպել մասնագիտական գրականության սպասարկման աշխատանքները արհեստագործական բաժնի կուրսերում,
- նոր ընդունված ուսանողներին ծանոթացնել գրադարանից օգտվելու կանոններին, պատրաստել պաստառներ.
 - Գիտելիքի և դպրության օրվա,
 - Հայաստանի Հանրապետության անկախության 30 - ամյակի,
 - Ալեքսանդր Մպենդիարյանի 150 ամյակի,
 - ուսուցչի տոնի,
 - ուսանողների միջազգային օրվա,
 - «Շնորհավոր տոնդ հայ զինվոր» խորագրով,
 - «Մեր աղոթքի լեզուն» վերտառությամբ
 - «Շնորհավոր տոնդ հայուհի»,

- «Մայր իմ անուշ ու բարի»,
 - «Հաղթանակների մայիս»
 - Հայոց ցեղասպանության 107-րդ տարելիցին նվիրված,
 - «Մեր շրջանավարտները» թեմատիկ պաստառներ,
 - Հրանտ Մաթևոսյանի 86-ամյակին նվիրված ընթերցանության ժամ՝ «Աշնան արև»,
- ընթերցանության ժամ Ավետիք Իսահակյանի ծննդյան 146-ամյակին նվիրված,
 - գրադարանային խորհրդի նիստերի կազմակերպում և անցկացում,
 - կազմակերպել և անցկացնել գրադարանային խորհրդի տարեվերջյան նիստ: Ացկացվել են գրադարանային խորհրդի նիստերը բոլոր անդամների մասնակցությամբ, արձանագրվել են անցկացման ամսաթիվը, նիստերին ներկա անձանց անվանացանկը, նիստերի օրակարգը, նիստերի անդամների ելույթները, օրակարգի վերաբերյալ ընդունված որոշումները ստորագրվել են խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից: Այսպիսով՝ վերոնշյալ կետերը առանձնակի ուշադրությամբ և հավուր պատշաճի կատարվել են գրադարանային խորհրդի կողմից, բոլոր պատի թերթերը և նշված ծրագրերը ներկայացվել են ըստ նախատեսված աշխատանքային պլանի: Սակայն՝ նշված կետերով չի սահմանափակվել գրադարանային խորհրդի աշխատանքը, կատարվել են նաև լրացուցիչ աշխատանքներ, անցկացվել են միջոցառումներ, որոնք միտված են եղել բարձրացնելու ուսանողների գեղագիտական ճաշակը՝ նպաստելով գեղագիտական և հայրենասիրական դաստիարակության առաջնահերթության ընկալմանը:
- Այս ուսումնական տարում ևս գրադարանային խորհուրդը, ըստ արժանվույն, իր ակտիվ մասնակցությունն ունեցավ նաև ուսումնական գործընթացում՝ նպաստելով դրանց դյուրին իրականացմանը, միևնույն ժամանակ իր ուրույն տեղն ու դերն ունեցավ քոլեջում տեղի ունեցող բազմաբովանդակ միջոցառումներին, որոնց շրջանակում ուսանողական խորհրդի ակտիվ մասնակցությամբ անցկացվեց միջոցառում՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին, ինչպես նաև Հովհաննես Թումանյանի ծննդյան և միևնույն ժամանակ, գիրք նվիրելու օրվա արթիվ անցկացվեց միջոցառում «Նվիրիր գիրք» խորագրով: Տոնին ընդառաջ տնօրինության, դասախոսների, ուսանողների կողմից գրադարանին նվիրվեցին բազմաթիվ գրքեր, որոնց շնորհիվ գրադարանային ֆոնդը հարստացվեց 30 օրինակ մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ:

Միջոցառումների շարքին կավելացնեն նաև այն պատի թերթերը, որոնք լույս ենք ընծայում ամեն ամիս, թեման ընտրում ենք տվյալ ամսում հիշարժան օրերին համապատասխան, դրանք են մեր ազգային, եկեղեցական, հոբելյանական օրերը, տոները: Քոլեջի պատի թերթի թեմատիկան համապատասխանում է նաև ԱՊՔ-ում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ձևին և բովանդակությանը, և դրանով նպաստում է այդ աշխատանքների արձյունավետ և որակյալ կրթության իրականացմանը:

ՄԱՆԿԱՎԱՐԺ-ՀՈԳԵԲԱՆ

2021-2022 ուստարվա աշխատանքային պլանի նաև նախատեսված զեկույցների շրջանակներում ուսումնասիրել եմ հոգեբանություն առարկայի դրվածքը ըստ բաժինների, կարիերայի կենտրոնի գործունեության, ուսանողների մոտեցումների, վարքագծի, ուսումնական և աշխատանքային մոտիվացիայի և գործունեության տեսակի:

Աշխատանքային պլանի կազմում ներառված են եղել հետևյալ աշխատանքները, որոնք լիարժեք իրականացվել են , բացառությամբ ծնողական հանդիպումների , որոնց անհրաժեշտությունը չի նկատվել :

1.Ծանոթանալ յուրաքանչյուր կուրսի բարոյահոգեբանական կողմին, առկա խնդիրներին,ուժեղ և թույլ կողմերին, միջանձնային հարաբերությունների առանձնահատկություններին, վարքին, հուզական ինտելեկտին :

2. Պարբերաբար կապ հաստատել կուրսդեկների և դասախոսական կազմի հետ՝ տեղեկանալու դասերի ընթացքի անցկացման արդյունավետ և խոչընդոտող կողմերին՝ հոգեբանական շարժառիթները քննարկելով:

3.Անհրաժեշտության դեպքում ունենալ հանդիպումներ և՛ կուրսերի, և՛ ուսանողների հետ՝ անհատական և խմբային ձևաչափերով:

4.Անհրաժեշտության դեպքում կազմակերպել ինֆորմացիոն և թերապևտիկ սեմինար-հանդիպումներ դասախոսական կազմի հետ:

5.Անհատական եղանակով անցկացնել թերապևտիկ հանդիպումներ հոգեբանական խնդիրներ ունեցող ուսանողների հետ, և խորհրդատվություններ ծնողների հետ:

Հիմնական հայցերը ուսանողների կողմից նշված միջանձնային հարաբերություններում առկա խնդիրներն և անհաղթահարելի վախերն են , որոնց ուղղված անցկացրել ենք թերապևտիկ հանդիպումներ :

Տարեսկզբին դրսևորվում էր մոտիվացիայի բարձր աստիճան բոլոր կուրսերում, նաև առարկայի շրջանակներում, ի տարբերություն ապրիլ-մայիս ամիսների: Նկատելի է նաև բաժինների կողմից դասախոսների հետ պարբերաբար տարվող

ուսումնամեթոդական աշխատանքները ,որոնց հետադարձ կապերը արդյունավետորեն երևում են :

Կուրսղեկական նիստի ժամանակ ներկայացրել եմ «Համակեցության կանոնների դրվածքի հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները քոլեջում » զեկույց ,որն իրականացվել է դասալսումների ժամանակ. դիտարկվել է երբեմն ի հայտ եկող միջխմբային և ներխմբային կոնֆլիկտները ,անհամաձայնեցված վարքագիծը, որի լուծումներում և կարգավորման ձևերում կարևոր է դասախոսի դերը, որը երբեմն բացակայում է:

Նաև մայիս ուսումնասիրել եմ Հոգեբանություն առարկայի դրվածքը, որի շրջանակներում ուսումնասիրել եմ Պ. Նահապետյանի և Մ.Մարգարյանի դասավանդման մոտեցումները, կիրառվող մեթոդները և առարկայի հանդեպ հետաքրքրության մակարդակը ուսանողների կողմից :

Ունեցել եմ 42 ժամ դասալսումներ բոլոր կուրսերում , դիտարկելով և՛ դասախոսների կողմից իրականացվող հոգեբանական կողմի առանձնահատկությունները , և՛ ուսանողների հոգեբանական, վարքային , միջանձնային , հաղորդակցման և պաշտպանական մեխանիզմների դիտարկում և հետադարձ կապով անդրադարձ :

Մեթոդիտրիուրդ

Կրթության մեջ շարունակ տեղի են ունենում բարեփոխումներ և ուսանողների հետաքրքրության և ուսումնառության արդյունքների բարձրացման նպատակով փորձում ենք դասապրոցեսին ինտեգրել նորարարական մեթոդներ: Քոլեջը ուստարում ունեցել է իր առ-ջև դրված մի շարք նպատակների ու խնդիրների իրականացում: ԱՊՔ-ում գործել է կրթա-կան ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորում ունեցող դասախոսա-կան կազմ, իրականացրել է դասախոսների ընտրության հստակ կառուցակարգեր:

2021-2022թթ ուստարվա աշխատանքային պլանով մեթոդիտրիուրդը նախատեսել էր՝

- Առարկայական ծրագրերի ուսումնասիրում, ծանոթացում նոր չափորոշիչներին, մասնագիտությունների պլաններին, մոդուլային և առարկայական ծրագրերի նախագծերին:
- Օրացուցային թեմատիկ պլանների հետ դասամատյանների գրանցումների համապատասխանության վերահսկում:
- Մանկավարժական և գաղափարադաստիարակչական աշխատանքների պլանների մշակում :
- Ամբիոններում բաց կամ օրինակելի դասերի կազմակերպում, դասավանդման մեթոդների կիրառման վերահսկում, սկսնակ դասավանդողներին՝ մասնագիտական հմտությունների ձեռք բերման գործում օժանդակումը, արդի տեխնիկական միջոցներն օգտագործելու միջոցառումների մշակումն ու իրականացումը:
- Մասնակցումը բաժինների աշխատանքային պլաններով նախատեսված դասալսում-ներին, դրանց վերլուծում և քննարկում, որոնց ժամանակ կարևորվում են ուսուց-ման նոր մեթոդները՝ որպես կրթական գործընթացի կարևոր բաղադրիչ:

Այսպիսով, ուստարվա սկզբին կազմակերպվել է ուսումնական հաստատության մեթոդական աշխատանքը՝ վերլուծելով ուսումնական հաստատության ուսումնամեթոդա-կան և դաստիարակչական աշխատանքը: Նիստերի ժամանակ առաջարկություններ են ներկայացվել կրթական գործընթացի և մեթոդական աշխատանքի արդյունավետության բարձրացման համար: Համակարգվել են մեթոդական

նյութերը ,որոնց հիման վրա կազմվել են տեղեկատվական նյութեր: Ընդհանրացվել և միջոցներ են ձեռնարկվել(-ում) քոլեջի մանկավարժական աշխատողների արդյունավետ փորձը տարածելու համար: Ըստ պլանի նախատեսվել է 5 ամբիոնի նիստ՝ 2-ը առաջին կիսամյակում, 3-ը՝ երկրորդ: Բոլոր նիստերն անցկացվել են ժամանակին, առկա են բոլոր հայտարարություններն ու արձանագրությունները: Նախատեսվել են մեթոդական հետևյալ զեկուցումները.

1. Ի՞նչ մոտեցումներ են կիրառում այն կուրսերում, որտեղ ուսանողների մեծամասնությունը ցուցաբերում է պասիվություն կամ հետաքրքրության բացակայություն:

Ջեկուցող՝ Ա. Կարապետյան

Որոշվեց՝ Սկսնակ դասավանդողների որակավորման բարձրացման, որակի ապահովման նպատակով իրականացնել մենթորության ծրագիր: Դասապրոցեսների ընթացքում կիրառել նաև SS ոլորտի բնորոշ մեթոդներ, քանի որ նոր սերնդի ուշադրության կենտրոնացման վրա դրանք ևս տիպիկ ազդեցություն, դեր ու նշանակություն ունեն:

2. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին դասախոսական կազմի կողմից կատարված դասա-լսումների գրանցումների քննարկում, դրանց դրական և բացասական կողմերն ու առավել արդյունավետ մեթոդները:

Ջեկուցող՝ Ս. Ղանդիլյան

Որոշվեց՝ Դասալսումը պետք է լինի նախապես դասավանդող դասախոսի հետ համաձայնեցված, ունենա կարևոր շարժառիթ և կոնկրետ նպատակ: Որոշվեց նաև առանձնահատուկ տեղ հատկացնել շերտավոր ուսուցմանը, ինչպես նաև առանձնահատուկ տեղ հատկացնել դասապրոցեսի ընթացքում հետադարձ կապի ամրապնդմանը(այսինքն համոզվել, արդյոք ուսանողը հանձնարարված առաջադրանքի վերաբերյալ ստանում է հետադարձ կապ),կատարել անդրադարձ՝ քննարում, աշխատանքի ընթացքում հնարավոր պար-զեցում մատուցելու համար, որոնք նպաստում են միասին աշխատելու հմտությունների զարգացմանը:

3. Ի՞նչ յուրահատուկ մեթոդներ են կիրառվում որոշ բարդ թեմաների դասավանդման համար:

Որոշվեց՝ Աշխատանքային մանկավարժական փորձի արդյունքում բարդ թեմաների դասավանդման համար հիմնվել որոշակի սկզբունքների վրա՝ կիրառելով ուսանողների գեներացման մեթոդն ու այնպիսի հմտու-թյուններ, որոնցով արժևորվում են յուրացվող գիտելիքները, օգտագործվում են մասնագիտական բառարան-ներ, սխեմաներ և այլն: Առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասալսման ընթացքում առավել արդյունավետ մեթոդների և մոտեցումների դուրս բերման, դրանք լսարանից լսարան տեղափոխման վրա:

4. Հայոց լեզվու և գրականություն առարկաների դրվածքի ուսումնասիրում և քննարկում՝ որպես քննական առարկաներ:

Զեկուցող՝ Ս . Ղանդիլյան

Որոշվեց՝ քուլեջում հայոց լեզու և գրականություն առարկաների դասավանդման ընթացքում բոլոր դասա-խոսները մանկավարժական և մասնագիտական հարուստ գիտելիքներ և փորձ ունենալով հանդերձ, առարկաների լիակատար մատուցման համար հիմնվում էին առանձնակի սկզբունքների վրա՝ կիրա-ռելով տարատեսակ մեթոդներ, որոնք առանձնահատուկ էին նորովի ու յուրովի մատուցման համար: Որոշվեց, շարունակաբար և անընդմեջ կիրառել ուսանողների ուշադրությունը ներգրավող և հետաքրքրու-թյունը շարժող այնպիսի մեթոդներ, որոնք կապահովեն դասին իրենց մասնակցությունը:

5. Ի՞նչ մեթոդներով եմ գնահատում կուրսի իմացական կարողությունները՝ որպես դասա-վանդման կազմակերպման ելակետ:

Զեկուցող՝ Շ. Սուսունյան

Որոշվեց՝ Ուսանողների անհատական աշխատանքներում գնահատել ընդհանուր չափորոշիչների կիրա-ռումն ու իմացությունը, առանց վնասելու նրանց պատկերացումները սեփական ստեղծագործության մասին:

6. Ի՞նչ նոր մեթոդներ և մոտեցումներ սովորեցի փորձի փոխանակման և դասալսումների արդյունքում:

Զեկուցողներ՝ Լ. Կարապետյան

Ա. Պողոսյան

Որոշվեց՝ Փոխադարձ դասալսումները նպաստում են ոչ միայն մեթոդների հազեցմանը, այլ նաև օգնում են ձեռք բերել սկսզբունքներ և մոտեցումներ, որոնք երբեմն առավել անհրաժեշտ են լինում դասապրոցեսի արդյունավետ իրականացման և անցկացման համար: Ուստի որոշվեց, որ փոխադարձ դասալսումները պետք է դարձնենք մեր մանկավարժական գործունեության հիմնական և կարևորագույն բաղկացուցիչ մասը՝ ըստ այդմ նպաստելով արդյունավետ մեթոդների՝ լսարանից լսարան տարածմանն ու նորովի և յուրովի մատուցմանը:

Այս հարցերի շուրջ քննարկումների արդյունքում հանգեցինք հետևյալին՝

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեդատում: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր կուրս տարբեր է: Մի կուրսում աշխատող մոտեցումը կարող է մի այլ կուրսում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է դասախոսը: Հաշվի առնելով միջին մասնագիտական կրթության ոլորտում ներկայացվող կրթական պահանջները սովորողների հետաքրքրության և ուսումնառության արդյունքների բարձրացման նպատակով, կիրառել դասավանդման լայնորեն տարածված թիմային մեթոդը, ինչն էլ հնարավորություն կտա իրականացնել մենթորության ծրագիր, որի ժամանակ մեր քոլեջի ավելի գիտակ և փորձառու մանկավարժները կօգնեն և կուղղորդեն սկսնակ դասավանդողներին՝ ապա-հովելով փոխգործակցություն և ընդհանուր նպատակների ամրապնդում:

ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՑ ԴԱՍԵՐ

Դասախոսի անուն, ազգանուն	ԱՌԱՐԿԱ	ԿՈՒՐՍ	ԹԵՄԱ	ԱՆՑԿԱՑՄԱ Ն ՕՐ
Գոհարիկ Վարդանյան	Հ.լեզվի և խոսքի մշ.	II Նախ. Կրթ.	<<Համանուններ և հարանուններ>>	14.10.2021
Ալինա Մկրտչյան	Կերակ. պատ. և ձևավ. հիմն. ուտեստ	II Խոհ. գործ	<<Կերակրատեսակնե ր ձավարեղենից, մակարոն.-ից և ընդեղենից>>	19.11.2021
Լիլիթ Կարապետյան	Ռուսաց լեզու	II Սպաս. կազմակ.	<<ДИАЛОГ КУЛЬТУР>>	07.10.2021
Սաիլյան Նինել	Հայոց լեզու	I Ն/Դ	<<Սահման. եղանակ>>	16.02.2022
Սահակյան Ալինա	Մասնագիտական անգլերեն	II Ֆին.	<<Մնտեսական կապը և դրա անհրաժ. ֆին.համակարգում>>	18.03.2022
Բաղայան Վիկա	Մոդուլ՝ Ֆինանսական և շուկաներ	III Ֆին.	<<Ֆինանսական միջոցներ գործառույթները>>	20.12.2021
Ռ. Վարդազարյա ն	Ձեռներեցություն	III Ֆին.	<<Բիզնես պլանների շնորհանդես>>	16.12.2021
Շուշան Սուսունյան	Մոդուլ՝ կոմպոզ.օրինաչափ. կիրառումը գծանկարում	III Համ.գեղ.նախ .	<<Էրգոդիկայն.Գույնի ընտրություն>>	06.12.2021
Շուշան Սուսունյան	Մոդուլ՝ <<Գունաբանություն> >	II Համ. գեղ. նախ.	Ամփոփիչ դաս՝ <<Մեր սիրո աշունը>>	18.11.2021

Անցկացված բաց դասերի վերաբերյալ վերլուծություն.

- Դասախոսություններն ապահովում էին անհրաժեշտ մանկավարժական և մասնագիտական բարձր մակարդակ, ընդգրկում էին վերլուծական ,քննադատական և համեմատական տարրեր
- Դասապրոցեսներն անցնում էին օրացուցային պլանով՝ պահպանելով թեմայի կառուցվածքը, ներկայացվում էին դասի նպատակները, խնդիրները և ակնկալիքները
- Դասախոսներն ունեին խոսքի մշակույթ, ինքնավստահ էին՝ ապահովելով ուսանող-դասախոս համագործակցության բարձր մակարդակ
- Դասախոսները տրամադրում էին համապատասխան դիդակտիկ նյութեր, զննական նյութեր, մասնագիտական գրականություն , ուսումնասիրվող տեմայի և՛ տեսական , և՛ ժամանակակից տեխնոլոգիաներով ներկայացրած նյութեր(սահիկահանդեսներ)
- Դասախոսները կարողանում էին լսարանի ուշադրությունը պահել մինչև դասի վերջը, ստեղծել քննարկումների համար անկաշկանդ մթնոլորտ, ուղղորդում էին ուսանողներին՝ եզրահանգումներին ինքնուրույն հասնելուն
- Ուսանողները կարողանում էին իրենց կատարած անհատական, գործնական աշխատանքներին գրագետ հիմնավորում տալ, պատասխանել միջառարկայական կապ ստեղծող բոլոր հարցերին
- Դասախոսներն աչքի էին ընկնում դասի արդյունավետ վարման իրենց հմտություններով և կիրառում էին դասավանդման ժամանակակից մեթոդներ:

Անվիճելի է, որ բաց դասերի անցկացման այս գործընթացը մի առաջընթաց քայլ է և նպատակ ունի բարձրացնել դասավանդման և կրթական ծառայությունների մատուցման որակը և արդյունավետությունը:

Առարկաների դասավանդման դրվածքների ուսումնասիրումը բաժիններում

<i>Պատասխանատու անձ</i>	<i>Առարկա</i>	<i>Անցկացման ամիս</i>	<i>Կատարման մասին</i>
Մարգարյան Մարինե	Հայոց լեզու	հոկտեմբեր	Կատարված է
Սահակյան Ալինա	Հանրահաշիվ	ապրիլ	Կատարված է

Ղազարյան Ասյա	Հոգեբանություն	մայիս	Կատարված է
Տերտերյան Սերինե	Ձեռներեցություն	նոյեմբեր	Կատարված է
Վարդազարյան Ռուզան	Մենեջմենթ	դեկտեմբեր	Կատարված է

Քոլեջում պարբերաբար կազմակերպվող բայց թեմատիկ միջոցառումները սովորող-ների մոտ ապահովել են այն գեղագիտական բացը, որ ունեցավ ներկա ժամանակներում մեր մատաղ սերունդը: Գրադարան-ընթերցասրահում անցկացվեցին գեղագիտական տարրեր պարունակող միջոցառումներ՝ նվիրված Գիրք նվիրելու օրվան և Մայրության և գեղեցկության տոնին: Ուշագրավ էր նաև

Ուսումնական առաջին կիսամյակն ու երկրորդ կիսամյակի մինչև ապրիլ ամիսն ընկած հատվածը հազեցած էր սովորողների արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը ձևավորող, նրա ստեղծագործական ունակությունները զարգացնող, հայրենասիրության և հայրենաճանաչման գաղափարները բարձր պահող 3 տպավորիչ միջոցառումներով :

Նախատեսվել է առաջին և երկրորդ կիսամյակներում բոլոր առաջին կուրսերում անցկացնել պարտադիր ստուգողական աշխատանքներ, 2-ական հանրահաշիվ առարկայից, 1-ական՝ երկրաչափությունից, 1-ական ռուսերեն և անգլերեն լեզուներից և 2-ական հայոց լեզու և գրականություն առարկաներից: Պարտադիր ստուգողական աշխատանքներ են հանձնարարվել նաև արհեստագործական բաժնի 2-րդ կուրսերում սովորող ուսանողներին: Բոլոր գրավոր աշխատանքները կատարվել են ժամանակին, խնամքով ստուգվել և գնահատականները համապատասխանաբար անց են կացվել դասամատյաններում: Աշխատանքների հետ կապված արվել են վերլուծություններ, իսկ առաջադիմության և որակի տոկոսային հարաբերությունների հետ կապված կազմվել է արձանագրություն:

Երկրորդ կիսամյակի ավարտին արհեստագործական և միջին մասնագիտական բաժնի ուսանողները բարեհաջող հանձնեցին ավարտական և փոխադրական քննություններ:

**2021-2022 ԹԹ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ**

2021-2022 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակի՝ հունվար-մարտ ամիսների ընթացքում մեթոդների ուսումնասիրման, պարզաբանման գործընթացում ևս մեկ անգամ եկան այն եզրահանգման, որ յուրաքանչյուր դասի ընթացքում դասախոսի կողմից կիրառվող այս կամ այն մեթոդն ունի ուսանողի ուսուցման գործընթացը խթանելու նպատակ: Ըստ ուսումնասիրության գործընթացի այս ռազմավարությունները կապված էին մասամբ թե-մայի բովանդակությունից և մասամբ սովորողի բնույթից: Դասավանդող դասախոսները փորձում են կիրառել և հիմնվել այն մեթոդների վրա, որոնք առնչվում են ուսանողների առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ: Այս գործընթացում ակնհայտ դարձավ նաև այն, որ մեթոդական ընտրություն կատարելիս մեր քոլեջում ոչ միայն հաշվի է առնվում առարկայի բնույթը, այլ նաև թե ինչպես են սովորում ուսանողները:

Դասավանդման մեթոդների ուսումնասիրման և գնահատման գործընթացն իրականացնելու նպատակով հիմնվել եմ հետևյալ հնարների վրա՝

- Դասալսում
- Դասախոսներ հետ քննարկում
- Դասալսման մատյանների արձանագրությունների վերլուծությունների հիման վրա փորձում եմ վերլուծել գործընթացը:

Այսպիսով, նշեմ նաև այն փաստը, որ որոշ դասախոսներ, ստանդարտ կամ նորագույն մեթոդների կիրառումից զատ, առանձնահատուկ տեղ են հատկացնում դասապրոցեսի ընթացքում հետադարձ կապի ամրապնդմանը (այսինքն համոզվում են, արդյոք ուսանողը հանձնարարված առաջադրանքի վերաբերյալ ստանում է հետադարձ կապ), մի մասը կատարում են անդրադարձ՝ քննարկում, աշխատանքի ընթացքում հնարավոր պարզեցում են մտցնում, նպաստում միասին աշխատելու հմտությունների զարգացմանը: Փորձառու մասնագետների մոտ առանձնահատուկ էր շերտավոր ուսուցման ապահովումը, ինչն էլ օրինակ պետք է հանդիսանա մեզ՝ սկսնակ դասախոսներիս համար: Կարելի է ասել, որ բոլոր դասերն էլ եղել են ուսուցողական, դասախոսները՝ կիրառելով տարբեր մեթոդներ, հնարներ ու հմտություններ, մեծ ջանք ու եռանդ են

գործադրել առավել թվով ուսանող-ների դասին ներգրավելու և նրանց մեջ թեմայի նկատմամբ հետաքրքրություն առաջաց-նելու մեջ: Ըստ կատարված ուսումնասիրությունների, դասալսումների գրանցումների, ամբիոնի վարիչների հետ ունեցած քննարկումների՝ որպես առավել արդյունավետ մեթոդ-ներ դուրս եմ բերել հետևյալը՝ Դոմինոյի մեթոդ, քարտային աշխատանք, խմբային աշ-խատանք, երիցուկի, հետազոտական, հարց ու պատասխանի, M-աձև և T-աձև մեթոդներ, ընթերցանության, կանխագուշակման, դասախոսության, հարց ու պատասխանի մեթոդ-ները..... միջին մասնագիտական գծով ուսումնական մասի ղեկավար ընկեր Մարտիրոսյանը, ով հանդիսանում է նաև բնագիտական առարկա դասավանդող դա-սախոս, վերլուծության և ուսումնասիրման արդյունքում առանձնացրեց դիտարկման և վերլուծման մեթոդները, թեմայի կրթառական նշանակությունը, անհրաժեշտության բացա-տրությունը: Բազմափորձ դասախոսների հետ քննարկման արդյունքում, ինչպես նշեց ընկեր Նահապետյանը, առանցքայինը գիտելիքների և գնահատման գեներացման մեթոդն է, այսինքն էլակետայինը ուսանողների եղած գիտելիքների մակարդակը պարզելն է, հետո դրանք խորացնելը, պատկերացումները ամրապնդելն ու դրա վրա նոր գիտելիքներ կառուցելը: Այս դեպքում առանձնահատուկ է նաև համագործակցության մեթոդը, որն էլ հնարավորություն է ընձեռնում հասկանալու, թե ինչ ճանապարհով պետք է հասու դարձնել գիտելիքները: Իսկ հոգեբանության փորձառու դասախոս ընկեր Մարգարյանի հետ ունեցած քննարկման ժամանակ նա կարևորեց այն փաստը, որ դասախոսը, նախքան որևէ մեթոդի կիրառմանն անցնելը, դասը վարի կանգնած, հատկապես երկսեռ կուրսերում ուշադրու-թյան կենտրոնում պահելով ամբողջ լսարանին, որից զգաստանում են ուսանողները: Շեշ-տեց նաև, որ յուրաքանչյուր մեթոդ կիրառելուց առաջ անհրաժեշտ է նախ և առաջ լսարանի լարգ ու կանոնի ապահովումը, պահանջենք հարգանք յուրաքանչյուր դասախոսի նկատ-մամբ:

Հատկանշական է ոչ թե այն փաստը, որ պետք է կիրառենք մեթոդը ճիշտ այնպես, ինչպես ներկայացվում կամ բնութագրվում է, այլ այն, որ դա մատուցենք նորովի ու յուրովի, ճիշտ այնպես, ինչպես կպահանջի լսարանային իրավիճակը: Այսինքն դասախոս-ները պետք է մեթոդներին շատ ճկուն մոտենան, դրա համար մեթոդների կիրառումը ստեղծագործական պրոցեսի պետք է նմանվի: Դասապրոցեսի ընթացքում, դասի և մնացած կիրառվելիք մեթոդների ակնհայտ արդյունք տեսնելու համար, առաջնային և լավագույն մեթոդը վստահության մթնոլորտ ստեղծելն է, երկրորդ մեթոդը,

պատկերավոր ասած օգնության մեթոդն է, այսինքն հարցերով, հարակից օրինակներով այս կամ այն ուսանողի եղած գիտելիքների դուրս բերումն է: Որպես գնահատում կարող եմ ասել, որ բոլոր մեթոդներն էլ արդյունավետ են, գնահատականներից էլ կարելի է ենթադրել մեթոդի արդյունավետությունը, բայց դա երբեմն բավարար չէ, քանի որ լինում են ուսանողներ, ովքեր չեն կարողանում ինքնադրսևորվել, գիտեն, բայց ամաչում են, կոմպլեքսավորվում են, և չի բացառվում, որ գնահատականը ցածր լինի: Նման պարագայում պետք է կիրառել վե-րոնշյալ վստահության և օգնության մեթոդները:

Այսպիսով, իմի բերելով զեկույցս, հավելեմ, որ քուլեջի և յուրաքանչյուրիս նպատակն է ապահովել ուսումնական գործընթացը՝ հիմնվելով դասավանդման և ուսումնառության արդիական և արդյունավետ մեթոդների վրա: Նշեմ նաև, որ դասավանդման և ուսումնառության արդյունավետության բարձրացման նպատակով, պետք է պարբերաբար արդիականացվեն դասավանդման և ուսումնառության մեթոդները:

ԶԻՆՂԵԿԻ, ՔՊ ՇՏԱԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

2021-2022թ-ի ուսումնական տարին սկսվել է տնօրենի անմիջական ղեկավարությամբ:

2021թ սեպտեմբերի 1-ին նախորդել են նաև կաբինետի կահավորման նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև ուսումնական գործընթացը կազմակերպող ու կարգավորող փաստաթղթերի մշակումը: Ըստ ՀՀ ԿԳՄՄՆ № 02/10.1/19-2021 01.08.2021թ հանձնարարականի՝ ուսումնական տարին սկսվել է առկա ձևաչափով՝ միջին և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգի համար Covid-19 պայմաններում նախատեսված հակահամաճարակային և սանիտարահիգիենիկ համապատասխան նորմերով:

2022թ-ի հունվարի 12-ից դասերն վերսկսվել են արդեն առկա ձևաչափով: Դասերի անցկացմանը զուգահեռ՝

1. 2022թ-ի հունվար-փետրվար ամիսներին քոլեջի նախագորակոչային տարիքի ուսանողներին տարածքային զինկոմիսարիատում հաշվառելու և կցագրելու համար անց են կացվել համապատասխան փաստաթղթերի հավաքագրում, ցուցակների կազմում (ըստ ցուցումների):
2. 2022թ-ի հունվար-փետրվար ամիսներին Արարատ «ԲԿ ՓԲԸ»-ում իրականացվել է նախագորակոչային տարիքի ուսանողների բուժզննման գործընթացը:
3. 2022թ-ի մարտի 1-ին ՔՊ համաշխարհային օրվա կապակցությամբ քոլեջի դասախոսական անձնակազմի և ուսանողների հետ անց է կացվել դաս-զեկուցում:
4. «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» առարկայի շրջանակներում ըստ ուսումնական վարժանքների ժամանակացույց պլանի՝ քոլեջում 04.03.2022թ-ին անց է կացվել շտաբային ուսումնավարժանք «Երկրաշարժի դեպքում ուսհաստատությունից անձնակազմի տարհանում» թեմայով:
5. 2022թ-ի մարտ ամսին տարածքային զինկոմիսարիատում վերջնականապես ավարտվեց քոլեջի նախագորակոչային տարիքի ուսանողների կցագրումն ու հաշվառումը:
6. ՔՊ նորմատիվները խթանելու, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի ստուգարքին առավելագույն ցուցանիշներ ապահովելու համար ֆիզվեկի հետ

քոլեջում 21.05.2022թ-ին կազմակերպել և անց են կացվել մարզական խաղ-մրցույթներ:

Առողջ վերլուծությունն էլ հենց ընկած է կրթության ներքին որակի հիմքում, ինչպես նաև դասախոսի կատարած աշխատանքի սանդղակային ցուցանիշ է: Բացառություն չի կազմում նաև ՆԶՊ և «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» առարկաների դասավանդման պրոցեսը, որը 2021-2022 ուստարում ունեցել է իր ուժեղ կողմերը, ռիսկերը և թույլ կողմերը: Ուժեղ կողմերը՝ քոլեջի զարգացման ծրագրից բխող ճիշտ ռազմավարությունը և հետեվողական վարչարարությունը, որոնք համարյա բոլոր եզրույթներում կոմպեսացնում են ռիսկերը: Նկատի է առնվում Covid-19 պայմաններում հեռավար ուսուցման ռացիոնալ կազմակերպումը: Թույլ կողմերի գերակշիռ մասը ունի սուբիեկտիվ բնույթ՝ հիմնականում հեռավար ձևաչափով դասերին մասնակցող ուսանողների տեխնիկական հնարավորությունների հետ կապված և դրանից բխող գնահատման օբյեկտիվությունը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԱՊՔ-ի կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի որակի ապահովման մեխանիզմների ներդրումն է բոլոր մակարդակներում և կրթության որակի շարունակական բարելավման խթանումը:

Առաջնային կարևորություն ունի ուսումնական հաստատության որակի ներ-քին ապահովման քաղաքականությունը, որը պետք է արտացոլի որակի ներքին ապահովման համակարգի հիմնական մեխանիզմները և նպաստի հաստատության հաշվետվողականությունը:

Արարատի պետական քոլեջում կրթության ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի 2021-2022 ուստարվա աշխատանքներն սկսել են օգոստոս ամսից ենթակառուցվածքի նիստերի օրակարգի կազմմամբ և հաստատումով:

Նիստերի օրակարգի համաձայն նախատեսվել է 4 նիստ:

Ցիտելով նախորդ ուստարվա բարելավման պլանով նախատեսված աշխատանքները, ապա կարող ենք ասել, որ մի մասն իրագործվել է.

մշակվել են.

- աշխատաշուկայում պահանջարկ ունեցող նոր մասնագիտությունների մշտադիտարկման հայեցակարգ,
- դասավանդման և ուսումնառության մեթոդների գնահատման ձևերի ըն-տրության և արդիականացման ընթացակարգ և քաղաքականություն,
- դասախոսական անձնակազմի կարիքների վերհանման հստակ մեխա-նիզմներ և գործիքակազմ,
- ուսումնական հաստատության ղեկավար և մանկավարժական աշխատող-ների գնահատման և խրախուսման քաղաքականություն և գործիքակազմ,
- գործատուների գոհունակության էլեկտրոնային հարցաշար,
- ԱՊՔ-ում իրականացվող կրթական ծրագրերի որակից շրջանավարտների բավարարվածության բացահայտման մեխանիզմներ,

ինչպես նաև վերանայվել է որակի հայեցակարգը և ընթացակարգը, պարբերաբար հարստացվում է քոլեջի կայքէջը:

Կրթության որակի ապահովման ենթակառուցվածքում 2021-2022 ուստար-վա ընթացքում անցկացվել է 4 նիստ, արձանագրվել են բոլոր նիստերը: Ստեղծվել է թղթապանակ բոլոր ստորաբաժանումներում իրականացված նիստերի հաշվետվությունների վերաբերյալ:

Ստեղծվել է 2021-2022 ուստարվա յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ար-ված մոդուլների/առարկանների վերլուծությունների թղթապանակ, ամփոփվել է բոլոր մոդուլների/առարկանների ընդհանուր և որակական առաջադիմությունը, ու-սանոդների շրջանում անցկացվել և ամփոփվել է ուսուցման որակի գնահատման հարցումը:

ԱՊՔ-ը իր առջև դրել է և ամենայն պատասխանատվությամբ փորձում է ի կա-տար անել հետևյալ գործողությունները.

- պլանավորում՝ խնդիրների սահմանում, հնարավոր լուծումների ձևակերպում,
- իրականացում՝ սահմանված պլանի հիման վրա միջոցառումների իրականացում,
- ստուգում՝ իրականացված գործողությունների ընթացիկ գնահատում
- բարելավում՝ արդյունքների ամփոփում և հետագա քայլերի վերանայում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ

(ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ)

(01.01.2021թ. – 01.01.2022թ. ժամանակահատվածի համար)

Պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը ՀՀ Կրթության և գիտության նախարարություն

Համակարգի բոլոր ՊՈԱԿ-ների գծով ամփոփ (ընդգծել)

Պետական ոչ առևտրային կազմակերպության անվանումը “Արարատի պետական քոլեջ” ՊՈԱԿ

	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգում (անվանումը)	Ծ ա ծ կ ա գ ի ր ը
Բաժին		09
Խումբ		03
Դաս		01, 02
Ամբողջ ծածկագիրը	X	

հազ. դրամ

1	2	3	4	5	6
	<i>Չբանական միջոցների տարեկան (հաշվետու ժամանակաշրջանի սկզբի) մնացորդ</i>	4618.7	4618.7		
2	Գ ն ր ծ ա ռ ն ա կ ա ն ե կ վ ա մ ու տ ն ե ր	x	x	x	x
2.1	Ե Կ Մ Ս ՈՒ Տ Ն Ե Ր Ա Պ Դ Ն Ա Ք Ն Ե Ր Ի Մ Տ Ա Կ Ա Ր Ա Ր ՈՒ Մ Ի Ց Ե Վ Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր Ի Մ Տ Ա Ռ Ա Յ ՈՒ Մ Ի Ց	16638.01	15964.16	673.85	
	այդ թվում	x	x	x	x
2.1.1	Բյուջեներից ստացվող եկամուտներ	-	-		
	այդ թվում	x	x	x	x
2.1.1.1	Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից		-		
2.1.1.2	Եկամուտներ համայնքների բյուջեներից	324.0	324.0	0.0	
2.1.2	Այլ աղբյուրներից ստացվող եկամուտներ				
	այդ թվում	x	X	x	x
2.1.2.1	Ապրանքների մատակարարումից				
	այդ թվում	x	x	x	x
2.1.2.1.1	<i>Պետական ոչ առևտրային կազմակերպություններից</i>				
2.1.2.1.2	<i>Այլ աղբյուրներից</i>				
2.1.2.2	Ծառայությունների մատուցումից	16314.01	15640.16	673.85	
	այդ թվում	x	x	x	x
2.1.2.2.1	<i>Պետական ոչ առևտրային կազմակերպություններից</i>				
2.1.2.2.2	<i>Այլ աղբյուրներից</i>				

2.2	ԴՐԱՄԱՇՆՈՐՉՆԵՐԻ ՓԵՎՈՎ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	110934.0	110934.0	0.0	
	այդ թվում	x	x	x	x
2.2.1	Բյուջեներից ստացվող դրամաշնորհներ	110934.0	110934.0	0.0	
	այդ թվում	x	x	x	x
2.2.1.1	Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից	110934.0	110934.0	0.0	
2.2.1.2	Դրամաշնորհներ համայնքների բյուջեներից				
2.2.2	Օտարերկրյա կառավարություններից ստացվող դրամաշնորհներ				
2.2.3	Միջազգային կազմակերպություններից ստացվող դրամաշնորհներ				
2.2.4	Այլ դրամաշնորհներ				
2.3	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՍՏԱՑՎՈՂ ՍՈՒՐՄԻՐԻՒՄՆԵՐ				
2.4	ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ				
2.5	ԸՆԴԱՄԵՆԸ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 2.1 + տող 2.3 + տող 2.4)	127572.01	126898.16	673.85	
3	Գ ը ր ծ ա ռ ն ա կ ա ն ծ ա խ ս ե ր	x	x	x	x
3.1	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵԾՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	113296.91	112455.74	841.16	
3.2	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՆՔ ԲԵՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ	7073.66	7063.85	9.81	
	այդ թվում	x	x	x	x
3.2.1	<i>Պետական ոչ առևտրային կազմակերպություններից</i>				
3.2.2	<i>Այլ աղբյուրներից</i>	7073.66	7063.85	9.81	
3.3	ԴՐԱՄԱՇՆՈՐՉՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏՐԱՍՖԵՐՆԵՐ				
	այդ թվում	x	x	x	x
3.3.1	<i>Պետական ոչ առևտրային կազմակերպություններից</i>				
3.3.2	<i>Այլ</i>				
3.4	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐ	10582.53	10582.53	0.0	
	այդ թվում	x	x	X	x
3.4.1	<i>Կենսաթոշակներ</i>				
3.4.2	<i>Կրթաթոշակներ</i>	10582.53	10582.53	0.0	
3.4.3	<i>Այլ նպաստներ</i>				
3.5	ԱՅԼ ԾԱՆՍԵՐ				
	այդ թվում	x	x	x	x
3.5.1	ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ, ՏՈՒԹՅԵՐ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐ	85.0	85.0	0.0	
	այդ թվում	x	x	x	x
3.5.1.1	Բյուջեներ կատարվող վճարումներ	85.0	85.0	0.0	
	այդ թվում	x	X	x	x
3.5.1.1.1	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե	85.0	85.0	0.0	
	այդ թվում	x	x	x	x
3.5.1.1.1.1	<i>Հարկեր և տուրքեր</i>	85.0	85.0	0.0	
3.5.1.1.1.2	<i>Այլ</i>				
3.5.1.1.2	Համայնքներ և բյուջեներ				
	այդ թվում	x	x	x	x
3.5.1.1.2.1	<i>Հարկեր և տուրքեր</i>				
3.5.1.1.2.2	<i>Այլ</i>				
3.5.1.2	Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ				
3.5.2	ԲՆԱԿԱՆ ԱՊԵՏՆԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ԲՆԱԿԱՆ ՎՆԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԳՆՈՒՄ				
3.5.3	ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՅԼ ԾԱՆՍԵՐ				

	այդ թվում	x	X	x	x
3.5.3.1.	<u>Այլ ընթացիկ ծախսեր</u>				
3.5.3.2	<u>Այլ կապիտալ ծախսեր</u>				
3.6	ԸՆԴԱՄԵՆԸ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱՆՍԵՐ (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3 + տող 3.4 + տող 3.5)	131038.09	130187.12	850.97	
4	ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (տող 2.5 – տող 3.6)	-3466.08	-3288.96	-177.11	
5	ԶՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԿՐՈՒՄՏՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (տող 5.1 + տող 5.2)	-1152.7	-1152.7	0.0	
5.1	Ներդրում ային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
5.2	Ներդրում ային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	1152.7	1152.7	0.0	
6	ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող 4 + տող 5)	-4618.78	-4441.66	-177.11	
7	ԴՐԱՄԱԿԱՆ ԱՅԼ ՀՈՍՔԵՐ (տող 7.1 + տող 7.2)				
7.1	Դրամական միջոցների այլ մուտքեր				
7.2	Դրամական միջոցների այլ ելքեր				
8	ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԶՈՒՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (տող 6 + տող 7)	-4618.78	-4441.66	-177.11	
9	<i>Դրամական միջոցների տարեվերջի (հաշվետու ժամանակաշրջանի վերջի) մնացորդը (տող 1 + տող 8)</i>	0.0	177.11	-177.11	

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԶԵՂՉԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական համակարգ	ուսանող /թիվ/	ընդամենը գումար
Միջին մասնագիտական	11	305800
Նախնական մասնագիտական /արհեստագործական	3	154000
Օգնություն		459800

2020 - 2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Կրթական համակարգ	բյուջե	արտաբյուջե	ընդամենը /գումար/
	գումար	գումար	
Միջին մասնագիտական	42634700	5774060	48408760
Նախնական մասնագիտական /արհեստագործական/	9203800	677500	9881300

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2021-2022 ուստարվա կառավարման խորհրդի աշխատանքներն իրականացվել են ըստ աշխատանքային պլանի: Առցանց եղանակով կազմակերպվել են նիստեր, որոնց ժամանակ քննարկվել են բազմաթիվ հարցեր, խնդիրներ ու տրվել լուծումներ: Նիստերի ընթացքում անրադարձ է կատարվել ընդունելության հետ կապված հարցերին, ուստարվա ընթացքում պատշաճ գործունեության կազմակերպման համար աշխատանքային խորհուրդների և հանձնաժողովների ստեղծման, ուսանողներին կրթաթոշակ նշանակելու հարցին:

Կառավարման խորհրդի ամփոփական քննարկման ու կայացրած որոշումների հիման վրա կատարվել են մոդուլային ծրագրերի վերամշակումներ՝ կապված թե՛ ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից մասնագիտությունների ուսումնական պլանների վերանայման և թե՛ քոլեջում նոր մասնագիտությունների լիցենզավորումից հետո առարկայական և մոդուլային ծրագրերի կազմման հետ, որոնք կապահովեն ուսումնական գործընթացի լիարժեք կազմակերպումը:

Կառավարման խորհրդի անդամներն ամփոփականորեն մասնակցել են քոլեջի զարգացման ծրագրերի, հեռանկայաին խնդիրների լուծմանը, կատարել ֆինանսատնտեսական հարցերի ընթացիկ վերահսկողություն:

Կառավարման խորհրդի կողմից վերանայվել, քննարկվել և հաստատվել է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական համակարգում առկա բոլոր մասնագիտությունների վճարովի համակարգի վարձավճարը չափը, ինչպես նաև՝ կարճաժամկետ ուսուցման դասընթացների վարձավճարի չափը:

Կապված կառավարման խորհրդի կազմում տեղի ունեցող փոփոխությունների հետ՝ տեղի են ունեցել քննարկումներ, առաջադրվել նոր թեկնածուներ ու ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատմանը: